# Ազգ
Azg

6 ԱՊՐԻԼ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 60 (4679)

ISSN: 1829-1651


# Հայ-թուրքական համատեղ արտադրության ֆիլմեր Ստամբուլի կինոփառատոնում

Ստամբուլում այժմ ընթացող միջազգային կինոփառատոնում ներկայացված են նաեւ հայ-թուրքական համատեղ արտադրության ֆիլմեր, որոնց պրեմիերան տեղի կունենա ապրիլի 12-ին: Ֆիլմերի ստեղծմանը մասնակցել են հայ ռեժիսորներ Դիանա Կարդումյանը, Գոռ Բաղդասարյանը, Արթուր Սուքիասյանը եւ թուրք ռեժիսորներ Կանայ Օզդենը եւ Գյուլեն գյուլ Ալթինթաշը: Նրանց ստեղծած ֆիլմերը, որոնք նկարահանվել են «Ոսկե ծիրան» փառատոնի եւ Անադոլու-քյուլթուր թուրքական ՀԿ-ի համատեղ ուժերով հիմնադրված հայ- թուրքական կինոպլատֆորմի շրջանակում, ցուցադրվելու են մրցույթից դուրս:

# Դրոշներ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Հարեւան երկրում իսկական դրոշապաշտություն է սկսվել: Մեկնարկն, ինչպես պաշտամունքի ոլորտի մյուս բոլոր հարցերում, անցյալ սեպտեմբերին տվել էր Իլհամ Ալիեւի «բարձրագույն կամքով». Բաքվում կառուցվել էր «պետական դրոշի հրապարակ, որտեղ կանգնեցվել էր աշխարհի ամենաբարձր դրոշակաձողը»: Իհարկե` «աշխարհի ամենամեծ պետական դրոշի» համար:

«Դարի կառույցի» հետ, իհարկե, Կասպիականի քամիները երբեմն չար կատակներ անում են: Այնքան, որ ԱԻ նախարարությունն ստիպված է լինում տարհանել մերձակա տների բնակիչներին: Բայց, ինչպես ասում են, «վատ օրինակը վարակիչ է լինում». Իլհամ Ալիեւը կարգադրել է 60-70 մետր բարձրության դրոշներ տեղադրել ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով:

Թե ի՞նչ խորհրդապաշտական իմաստ է դրել դրանում նա` այդ մասին ադրբեջանական կողմն առայժմ որեւէ մեկնաբանություն չի արել: Խոսքը պաշտոնական մեկնաբանության մասին է: Բայց երեւույթն ինքնին ուշադրության արժանի է:

Եթե վերացարկվելու լինենք ադրբեջանական կողմի բնութագրական անհավասարակշռվածությունից, ապա թերեւս կարելի է ասել, որ այդ կերպ Իլհամ Ալիեւը զորքերի շփման ներկա գիծն ընդունում է որպես պետական սահման: Չէ՞ որ նման դեպքերում է պետությունը բարձրացնում իր դրոշը` արձանագրելով այդ կերպ սեփական տարածքի վերջին հատվածը:



«Նարգիզթեփեի» դրոշը

Այս իմաստով, անշուշտ, նա խելացի քայլ է կատարել. շփման գծում ծառայություն անցկացնող զինվորներն ու մերձակայքի քաղաքացիական բնակչությունն, Աստծո ամեն օր արթնանալով եւ հարգանքի տուրք մատուցելով սեփական երկրի պետական դրոշին, ակնհայտորեն գիտակցում են, թե որտեղից է սկսվում եւ որտեղ է ավարտվում իրենց երկիրը:

Տես էջ 2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

# Եկեղեցին երկուստեք կարեւորվել է հայ եւ սերբ ժողովուրդների կյանքում

Երեկ ավարտվեց Հայաստանի նախագահի առաջին պաշտոնական այցը Սերբիա: Երեկվա համարում տեղեկացրինք, որ այցի առաջին օրը Սերժ Սարգսյանին ընդունել են Սերբիայի նախագահը, վարչապետը, ԱԺ նախագահը: Երկու երկրների ղեկավարները հանդես են եկել «մամուլի համար հայտարարությամբ», որին երեկվա համարում անդրադարձել է «**Ազգը**»: Այցի երկրորդ օրը Հայաստանի նախագահին ընդունել է Սերբիայի պատրիարք Կիրինեն: Վերջինս նշել է, որ հայ եւ սերբ ժողովուրդների ամենամեծ ընդհանրությունը կրոնն է: Նախագահ Սարգսյանն իր հերթին ընդգծել է, որ հայ ժողովրդի պատմության մեջ եւս եկեղեցին մեծ դեր է խաղացել` երբեմն փոխարինելով պետականությանը: Նախագահը այցելել է Սուրբ Գաբրիել հրեշտակապետի Մայր տաճար, որտեղ սերբ պատրիարքն իր հյուրին է ներկայացրել եկեղեցու պատմությունն ու նշանակությունը սերբ ժողովրդի համար: Այցի ընթացքում նախագահ Սարգսյանը հանդիպել է նաեւ Սերբիայի փոքրաթիվ` 350-հոգանոց հայ համայնքին:

Երեկ Հայաստանի նախագահը հեռախոսազրույց է ունեցել Ղազախստանի իր գործընկերոջ` Նուրսուլթան Նազարբաեւի հետ եւ շնորհավորել վերջինիս` նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ: Ըստ նախագահի պաշտոնական կայքէջի` Սերժ Սարգսյանը հույս է հայտնել, որ «երկու երկրների նախագահների ձեռք բերած անձնական վստահելի հարաբերությունները կշարունակեն հետագայում եւս ծառայել` ի շահ հայ եւ ղազախ ժողովուրդների»: Նշենք նաեւ, որ Ղազախստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը երեկ հրապարակեց անցյալ կիրակի անցկացված նախագահական ընտրությունների վերջնական արդյունքները, որոնք նախնականից ոչնչով չեն տարբերվում. Ղազախստանի վերընտրված նախագահ Նազարբաեւը հավաքել է ընդհանուր ձայների` 95,5 տոկոսը:

Հ. Ա.

# «Ռեժիմը խուճապի մեջ է»

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանում ստեղծված վիճակը, որքան էլ տարօրինակ է, այսօր ոչ թե քաղաքական լուծումների կարիքն ունի, այլ սրտացավ եւ բանիմաց տնտեսվարման, իր տան եւ ընտանիքի բոլոր անդամների բարեկեցությամբ մտահոգված կառավարչի, քանի որ տնտեսության վատ վիճակի եւ կյանքի զրոյական որակի ջինն այնպես է շշից դուրս եկել, որ նոր որակի ու կամքի նոր մարդիկ են հարկավոր` վիճակ շտկելու համար: Կյանքի որակ փոխողները սովորաբար նախ եւ առաջ իշխանությունները պիտի լինեն` եթե իսկապես մտքներին դնեն արմատապես լուծել կուտակված բազմաթիվ խնդիրները: Կամ ընդդիմադիրները, որոնք ընտրությունների միջոցով իշխանության գալիս` նախ պետք է խնդիր դնեն արմատապես փոխել վիճակը, եւ ոչ թե պաշտոնները յուրայիններին բաժանելու մասին միայն մտածեն: Հները, որ ՀԱԿ-ի տանիքի տակ են, մի անգամ ստանձնել են երկրի ղեկը վարել` չի ստացվել: Կրկին փորձիր: Բայց չէինք ուզենա, որ նոր փորձը փորձանք դառնա այս ժողովրդի գլխին: Քանզի երիտասարդները չեն հիշում մեր գլխին եկածը ու հենց այդ պատճառով խոսում են «կոնգրեսական» հեղափոխությունից, իսկ մենք չենք կարող մոռանալ, չմոռանալը քիչ է, պարտավոր ենք հիշեցնել, որ մի անգամ արդեն իշխանություն եղածների մղիչ ուժը իշխանության համն ու հմայքն էր միայն` նյութական ամրապնդիչներով:

Զգտանք-չաճեցրինք նոր սերնդի այն տնտեսագետներին, որոնք հայրենասեր են միաժամանակ եւ երկրի կյանքը փոխելուն են ուզում նվիրվել, այն քաղաքագետներին, որոնք ոչ թե այս կամ այն քաղաքական ուժին են սպասարկում, այլ ի սրտե ցանկություն ունեն մեր երկիրն այս վիճակից դուրս բերելու քաղաքական թարմ եւ աշխատող մոդելներ գտնել եւ կիրառել, այն սոցիոլոգներին, որոնք ոչ թե այս ու այն քաղաքական ուժի պատվերով ու վարձատրությամբ հարցում կանեն, ընտրություններին մոտիկ` պրայմերիզ, իսկ ընտրություններից օրը` կեղծ էքզիթ-պոլ, այլ դուխներն ու բարոյականությունը կհերիքի` վերջապես բոլոր ուժերին մասնացույց անելու իրենց իրական վարկանիշը: Այդ բոլորը չենք արել, չենք պատրաստել մեզ հարկավոր բոլոր մասնագետների անկաշառ տեսակին, կեղծիքի ու երեսպաշտության վատ օրինակներով երիտասարդներին մղել ենք նույն չօրինված ճամփով, նրանք էլ մտածել են` այսպես է ապրելու հարկավոր ձեւը (հարի՛ֆ չլինելը) եւ նույն ոգով շարունակում են. այն է` գրավել իշխանությունը, մի յուղոտ պաշտոն կամ եկամտի աղբյուր ձեռք գցել իշխանություն լինելով, սա` գերնպատակ, իսկ նրանց տերերն էլ մի անգամ եւս ժողովրդին խաբելով` ուզում են վերադարձնել այն բոլորն, ինչ ունեին մի ժամանակ ու ժողովրդին էլ բոլորովին էլ բաժին չհանեցին, այլ, ընդհակառակը, վաուչերիզացիայով եւ նման այլ մեթոդներով օրինականացրին թալանն ու դարձան ձեռնարկատեր, օլիգարխ, բարեգործ:

Հիմա, եթե միայն մարդ փոխելու խնդիր է դրված, իսկ ժողովուրդն ավելի վատթար է ապրելու, ինչում լիովին համոզված ենք ներկա ընդդիմության բոլոր կերպարներին մոտիկից ծանոթ լինելով, ապա ժողովուրդը պետք է հասկանա, որ չարժե գեղեցիկ խոստումներով մի անգամ եւս խաբվել:

Չէինք ուզենա անազնիվ լինել եւ ժողովրդի գրագետ հատվածին այս բոլորը մեկ անգամ եւս չհիշեցնել, չհուշել, թե «Ռեժիմը խուճապի մեջ է», «Իշխանությունը հիստերիայի մեջ է»` շուտասելուկի պես ամեն օր հնչող կարգախոսները նման են մթության մեջ հայտնված ու վախից գոռացող մարդու գոռոցների բովանդակությանը. «Ռեժիմը խուճապի մեջ է» ասող ուժը ինքն է խուճապի մեջ, պարզվում է, խուճապի մեջ է ամեն օր իր հանրահայտ համակիրներին կորցնելուց, շարքային համակիրների զանգվածային հիասթափությունից, իրենից անկախ պատճառներով ընտրապայքարը մեկ տարի շուտ սկսելու փաստից:

Տես էջ 8

# ՌԱԿ Արեւելյան Ամերիկայի եւ Կանադայի վարչության պատվիրակության հանդիպումը ՄԱԿ-ում Հայաստանի ներկայացուցիչ Կարեն Նազարյանի հետ

Անցած շաբաթավերջին ՌԱԿ Արեւելյան Ամերիկայի եւ Կանադայի շրջանային վարչությունը Նյու Յորքում այցելություն է տվել ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ **Կարեն Նազարյանին**, որի հետ անցնող երկու տարիների հաջող համագործակցությունը նոր ծրագրերի առիթ է ընծայում: Դեսպանը գնահատանքով է արտահայտվել ներկայացուցչության եւ Նյու Յորքի Թեքեյան մշակութային միության միջեւ սերտ կապերի մասին, երկխոսություն է տեղի ունեցել նաեւ սեպտեմբերին Անկախության 20-րդ տարեդարձի եւ ՄԱԿ-ի նստաշրջանին նախագահ Սարգսյանի ներկա գտնվելու զույգ առիթներով Նյու Յորքում մեծարանքի հանդիսության ծրագրման վերաբերյալ: Վարչության պատվիրակության կազմում են եղել վարչության անդամներ **Վաղինակ Դարբինյանը, Գրիգոր Սալպաշյանը**, ՌԱԿ մամլո դիվանի ատենապետ **Հակոբ Վարդիվառյանը**` գլխավորությամբ վարչության համաատենապետ **Բաբկեն Մկրյանի**: Զրույցի ընթացքում խոսվել է կուսակցության ներքին վիճակի մասին սփյուռքում եւ Հայաստանում, առաջիկա երկու տարիներին իրականացնելիք ծրագրերի մասին: Դեսպան Նազարյանը գնահատանքով է նշել «Արմինյըն միռոր սփեքթեյթըր» պաշտոնաթերթի դերը` հայրենիքին եւ Մայր աթոռին թիկունք կանգնելու առումով:

# Ադրբեջանը ԵԱՀԿ-ին, ԱՄՆ-ին կոչ է անում «չխառնվել»

Ադրբեջանում Միացյալ Նահանգների դեսպանատունը հայտարարություն է տարածել` իր մտահոգություններն արտահայտելով ապրիլի 2-ին Բաքվում ադրբեջանական ընդդիմության խաղաղ ցուցարարների դեմ երկրի կառավարության ձեռնարկած քայլերի առնչությամբ, հատկապես որ որոշ ընդդիմադիր ակտիվիստներ ձերբակալվել էին մինչեւ նախատեսված բողոքի ակցիաների իրագործումը:

Ըստ հայտարարության, Միացյալ Նահանգները կոչ է անում Ադրբեջանի կառավարությանը «հարգել իր քաղաքացիների` հանրահավաքներ անցկացնելու եւ խոսքի ազատության իրավունքները, որոնք երաշխավորված են Ադրբեջանի սահմանադրությամբ եւ մարդու իրավունքների միջազգային գործիքներով, ներառյալ ԵԱՀԿ առջեւ ստանձնած պարտավորությունները»: ԱՄՆ-ը Ադրբեջանին հիշեցրել է, որ այդ իրավունքները հարգելը էական նշանակություն ունի քաղաքացիների ու կառավարության միջեւ երկխոսության խրախուսման առումով: Հայտարարությամբ կոչ է արվում, որ ցույցերի առնչությամբ ձերբակալվածների նկատմամբ օրինական գործընթացներ անցկացվեն` բաց եւ թափանցիկ լսումներով եւ իրավական խորհրդատվության նկատմամբ համարժեք մատչելիությամբ:

Ապրիլի 2-ի ցուցարարների հանդեպ վերաբերմունքի մասին իր մտահոգություններն էր հայտնել նաեւ ԵԱՀԿ-ն, որի առնչությամբ, խոսքը նաեւ ԱՄՆ դեսպանատանը հասցեագրելով, Ադրբեջանը, ի դեմս նախագահի աշխատակազմի, կոչ է արել «օտարերկրյա ներկայացուցչություններին չխառնվել երկրի ներքին գործերին»: Ընդ որում, որպես հիմնական փաստարկ է նշվում այն, թե ապրիլի 2-ին ցուցարարների հանդեպ ադրբեջանական ոստիկանության կիրառած միջոցները «ընդունելի են Ադրբեջանի բնակչության համար», մինչդեռ ԱՄՆ-ն ու ԵԱՀԿ-ն «խառնվում են Ադրբեջանի ներքին գործերին»: Իսկ այն, որ Ադրբեջանում իբր հարգանքով են վերաբերվում խոսքի ազատությանը, կարող է անգամ մեր նման երկրի համար, որտեղ խոսքն էլի ազատություն շատ չի վայելում, ծիծաղելի հնչել:

Նշենք, որ «փոքր եղբոր» ավագը` Թուրքիան էլ այս օրերին ԵԱՀԿ «ջերմ» խոսքերին է արժանացել, այն հայտարարությամբ, որ այդ երկրում բանտերում են գտնվում նվազագույնը 57 լրագրող:

Ամեն դեպքում, օրերս Բաքվում կլինի Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Մեւլութ Չավուշօղլուն, եւ շատ հետաքրքրական է, թե ինչպես կարձագանքի ԵԽԽՎ նախագահը ստեղծված իրավիճակին:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Սոցհարցում՝ վրացական ձեւով, կամ որքան «պաշտպանված են ազգային փոքրամասնությունները»

Սոցիոլոգիական հարցումները յուրահատուկ գործիք են ու հարավկովկասյան տարածաշրջանում ավելի շուտ ծառայում են կոնկրետ իրավիճակների եւ ուժերի, քան փորձում են վեր հանել իրավիճակի բնութագրականները: Այդպիսիք թեկուզ ընտրական գործընթացներում այնքան հաճախ են պատահում, որ այդ հարցումների «տվյալների» առնչությամբ զարմանքը բավականին փոխվել է անտարբերության, ձեւակերպմամբ, թե այդպիսի հարցումները հող են նախապատրաստում հետագա «ցուցանիշների» հիմնավորման համար:

«Քաղաքացիական զարգացման գործակալություն» ոչ կառավարական վրացական կազմակերպության անցկացրած հարցումներով, որ ամենայն մանրամասնությամբ տարածել են վրացական լրատվամիջոցները, իբր պարզվել է, թե Վրաստանի ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլի եւ հայաբնակ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջաններում մեծամասնությունը գտնում է, որ «ազգային փոքրամասնությունները պաշտպանված են»:

Այն ժամանակ, երբ Վրաստանի հայերն իրենց հերթին, ադրբեջանցիներն էլ՝ իրենց, բարձրաձայնում են իրենց խնդիրների, կրթության ու դավանանքի առնչությամբ ունեցած բազմաթիվ հարցերի մասին, վրացական կազմակերպությունն իր հարցումներով «բացահայտում է», թե «հայաբնակ Սամցխե-Ջավախեթիի եւ ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլիի բնակիչներից հարցման մասնակիցների 60,4 տոկոսը գտել է, որ փոքրամասնությունների իրավունքները Վրաստանում պաշտպանված են»:

2002թ. մարդահամարի տվյալներով, Սամցխե-Ջավախեթիի բնակչությունը կազմում է 207598 մարդ, որից 54,6 տոկոսը՝ հայեր, 43,4 տոկոսը՝ վրացիներ, 1,1 տոկոսը՝ ռուսներ, այլ էթնիկ ներկայացուցիչները կազմել են պակաս քան 1 տոկոս: Իսկ Քվեմո Քարթլիում ադրբեջանցիները կազմել են 45,1 տոկոս, վրացիները՝ 44,7, հայերը՝ 6,4, հույները՝ 1,5, ընդհանուր բնակչության 497 530 թվաքանակի դիմաց:

Անցյալ տարեվերջին նշված տարածաշրջաններում անցկացված հարցմանը, որի արդյունքները ներկայացվել են հանրությանը, մասնակցել է 500-ական բնակիչ երկու տարածաշրջաններից՝ ինչպես հայ եւ ադրբեջանցի, այնպես էլ վրացի: Ամեն դեպքում, ամեն ինչ այդքան միանշանակ ու պայծառ չէ, ինչպես փոքրամասնությունների «պաշտպանված» իրավունքների պարագայում: Ըստ հարցման, Քվեմո Քարթլիում միայն 3,5 տոկոսն է համարում, որ իր հայրենիքը Ադրբեջանն է, Ջավախքում այդ կարծիքին է հարցվածների ավելի քան 28 տոկոսը՝ իր հայրենիքը համարելով ոչ թե Վրաստանը, այլ Հայաստանը:

Այս ամենի կողքին, ըստ հարցման, Ջավախքում ոչ վրացի հարցվածների 26.6 տոկոսը, իսկ Քվեմո Քարթլիում՝ 30 տոկոսն է, որ չի տիրապետում վրացերենին, մինչդեռ 2009-ին այդ ցուցանիշը երկու տարածաշրջանում էլ նշվում էր որպես մոտ 42 տոկոս: Վրաստանի անվտանգության խորհրդի քարտուղար **Թամար Կինցուրաշվիլու** մեկնաբանությամբ, սա վկայում է «ինտեգրման առումով պետության ճիշտ քաղաքականության մասին»:

Հարցման այն տվյալները, թե էթնիկ փոքրամասնությունների համատարփակ բնակեցման այս տարածաշրջաններում «մեծ է վստահությունը Վրաստանի նախագահի հանդեպ», լիովին տեղավորվում է ընտրական գործընթացների ավարտին գրանցվող արդյունքների տրամաբանության մեջ, երբ այս տարածաշրջաններից Վրաստանի ամեն մի նախագահ առնվազն 99 տոկոս ձայն է «հավաքում»: Ամեն դեպքում, բանակին այս տարածաշրջաններում չեն վստահում, վստահություն չկա նաեւ ոստիկանության հանդեպ, իսկ քաղաքական կուսակցություններին վստահում է հարցվածների 26 տոկոսը:

Մամուլն էլ առանձնակի վստահության չի արժանանում՝ ԶԼՄ-ներին վստահում է հարցվածների 40 տոկոսը: Իսկ կրոնական հաստատություններին վստահում է հարցման մասնակիցների ավելի քան 60 տոկոսը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Եհովայի վկաները» բանակից խուսափելու համար ֆինանսական օժանդակություն են ստանում

Հայաստանում այլընտրանքային ծառայության հնարավորություն ունեն միայն «Եհովայի վկաներն» ու մալականները: Էմոներին, այլ աղանդների ներկայացուցիչներին, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում այլընտրանքային ծառայության հնարավորություն չի տրվել: Սա «Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության եւ վերականգնողական կենտրոնի» նախագահ **Ալեքսանդր Ամարյանի** կարծիքն է: Նրա գնահատմամբ՝ «Եհովայի վկաների» համար բանակ գնալը ձեռնտու է:

«Բանակ չգնալու համար դատապարտում են 2 տարի ազատազրկման, սակայն դրա համար ֆինանսական ու նյութական աջակցություն են ստանում հովանավորներից»: Հայաստանում այսօր կա 170 Եհովայի վկա, որոնք խուսափում են ոչ միայն բանակում ծառայելուց, այլեւ այլընտրանքային ծառայությունից: Հայաստանում այլընտրանքային ծառայության մասին ընդունված օրենքը չի գործում: Մեռած է նաեւ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների» մասին օրենքը: Ամարյանի մեկնաբանությամբ՝ օրենքում մի շարք բացեր կան. օրինակ՝ հստակ սահմանված չէ, թե որն է համարվում հոգեորսություն կամ աղանդ: Մասնագետն առաջարկում է օրենքում կատարել փոփոխություններ, որոշ դրույթներ հստակեցնել: Ամարյանը փաստեց, որ Հայաստանում օրենք չի գործում, ըստ որի, կրոնական կառույցին կարող են պատժել կամ պարտադրել կոմերցիոն գործունեության համար կատարել վճարումներ: Ի տարբերություն Ռուսաստանի, Հայաստանում արգելված չէ «Եհովայի վկաների» մասին գրականության տարածումը:

Հ. Հ.

## ՀԱԿԻՐՃ

# Հայաստանի պատվիրակությունը՝ Գագարինի թռիչքի հոբելյանին

**Ինչպես տեղեկացնում է Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիայի կայքը (www.yerphi.am), Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Մոսկվայում մասնակցել է Յուրի Գագարինի թռիչքի հիսնամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին: Մոսկվայի արվարձան Աստղային քաղաքում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Տիեզերագնացների պատրաստման կենտրոնի ղեկավարության, տիեզերագնացների, տիեզերական տեխնիկայի մասնագետների հետ, ինչպես նաեւ այցելել է Տիեզերական թռիչքների կառավարման կենտրոն, Կորոլյով քաղաքում: Խորհրդային, ռուսական տիեզերական ծրագրերում 1961-ից Հայաստանի մասնագետների մասնակցության եւ նրանց արձանագրած նվաճումների մասին կլոր սեղան-քննարկմանը զեկուցել է պրոֆեսոր Վահագն Գուրզադյանը (Ալիխանյանի անվան Ազգային լաբորատորիա): Քննարկմանը ներկա էր Ռուսաստանում Հայաստանի դեսպան Օլեգ Եսայանը:**



*Պրոֆեսոր Վ. Գուրզադյանը աստղային քաղաքում ելույթ ունենալիս:*

Մ. Բ.

# Կոնգոյում վթարի ենթարկված ինքնաթիռի հրամանատարը հայ է եղել

**Կոնգոյում օրեր առաջ տեղի ունեցած ՄԱԿ-ի առաքելության վթարված ինքնաթիռի անձնակազմի հրամանատարը հայ է՝ Վրաստանի քաղաքացի Ալեքսեյ Հովհաննիսյանը: Այս մասին տեղեկություն է տվել վրացական «Ռուսթավի-2» հեռուստաընկերությունը: Անձնակազմի երեք անդամներն էլ Վրաստանի քաղաքացիներ են եղել՝ Airzena - Georgian Airways ավիաընկերության աշխատակիցներ:**

# Ազգային ժողովի նախագահը երիտասարդական խորհրդարան է ստեղծում

**Այս լուրը, պարզվում է, համապատասխանում է իրականությանը, քանի որ Հովիկ Աբրահամյանն, իրոք, մարտի 28-ին կարգադրություն է ստորագրել Երիտասարդական խորհրդարան ստեղծելու մասին, որտեղ ընդգրկվելու համար կարող են դիմել Հայաստանի 18-30 տարեկան քաղաքացիները: Նրանք կարող են ինքնաառաջադրվել՝ ներկայացնելով Հայաստանի մարզեր, Ազգային ժողովում ներկայացված եւ չներկայացված կուսակցություններ, ՀԿ-ներ, միություններ, ուսումնական հաստատություններ: Ազգային փոքրամասնությունները եւս կարող են դիմել՝ երիտասարդական խորհրդարանի 3 տոկոսը լինելու են նրանց ներկայացուցիչները:**

Մ. Խ.

# Անահիտ Բախշյանը քաղաքապետից ուզում է ճշտել

**Ազգային ժողովի «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Անահիտ Բախշյանը Երեւանի Ավան վարչական շրջանի կանաչապատ տարածքի հաշվին շինարարության վերաբերյալ նամակ է հղել Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանին, նշելով Ավանի Իսահակյան թաղամասում՝ մայթի ու փոստատան միջեւ գտնվող կանաչ տարածքում սկսված շինարարության մասին, որի թույլտվությունը հենց քաղաքապետինն է: Ա. Բախշյանը նամակում պատմել է, որ ապրիլի 4-ին այցելել է տվյալ տարածք եւ համոզվել, որ շինարարությունն իրականացվում է կանաչ տարածքի վրա: Նամակում Բախշյանը հարցադրումներ է արել՝ ակնկալելով ստանալ շինարարության թույլտվության հիմքերի, համայնքի ճարտարապետական փորձաքննության, հողակտորի պատկանելության մասին տեղեկանքներ:**

Մ. Խ.

# Դրոշներ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում

*1-ին էջից*

**Սկսվում է Բաքվի «պետական դրոշի հրապարակից» եւ ավարտվում այնտեղ, որտեղով անցնում է զորքերի շփման գիծը:**

**Այլ իմաստ ադրբեջանական «դրոշապաշտությունը» հաստատ չունի: Անտրամաբանական է մտածել, որ Իլհամ Ալիեւը կարգադրել է զորքերի շփման գծի երկայնքով դրոշներ ծածանել, որպեսզի խրամատներից այս կողմ մենք մեզ վատ զգանք: Ինչո՞ւ պիտի վատ զգանք: Մենք բոլորովին էլ վատ չենք զգում, որ Բաքվի բոլոր շենքերը զարդարված են հայր եւ որդի Ալիեւների մեծադիր լուսանկարներով: Ճիշտ այդպես էլ չենք հրճվում, երբ որեւէ մեկն այդ նկարներով «սրբացված» շենքի պատին այսպիսի գրություն է թողնում. «Այ էշ, մի կեղտոտիր»,- ինչպես օրերս նման լուսանկար էր տարածել, աներեւույթ՝ անզգուշորեն, պետականամետ 1news.az-ը: Իրենց երկիրն է, իրենց «սրբությունները»: Կուզենան՝ կերկրպագեն, կուզենան՝ «էշի տեղ» կդնեն:**

**Նույնը՝ դրոշի պարագայում: Մանավանդ՝ շփման գծում:**

**Բայց օրերս ադրբեջանցի լրագրողներից մեկն այցելել է «Խոջավենդի շրջանի ազատագրված հատված»: Խոսքը ԼՂՀ Մարտունու շրջանի այն հատվածի մասին է՝ 17 000 հեկտար մակերեսով, որ ադրբեջանական զինված ուժերի օկուպացիայի տակ է: Եվ ի՞նչ եք կարծում: Այո, դրոշապաշտությունը հասել է նաեւ այդտեղ: «Նարգիզթեփե» անվանված վայրում էլ կանգնեցված է Ադրբեջանի պետական դրոշը: Եվ լրագրողը դրանից ընդհանրացրել է, որ «Ադրբեջանի պետական դրոշը ծածանվում է Լեռնային Ղարաբաղի վրա»:**



*Հեյդար Ալիեւը զրուցում է գնդացրորդի հետ:*

**Լրագրողի «տեղանվանագիտական եւ պատմական վերլուծությունները» հանած՝ սույն «խորհրդապաշտական» քայլի իմաստն այն է, որ, ինչպես նա է գրում, 1994թ. «Նարգիզթեփե այցելել, զինվորների հետ զրուցել եւ «հայկական զորքերի հետագա առաջխաղացումը կանխել է» անձամբ Հեյդար Ալիեւը»:**

**Ստացվում է, որ «Լեռնային Ղարաբաղի վրա ծածանվող» դրոշն իրականում կանգնեցվել է ի պատիվ Հեյդար Ալիեւի, որը «եթե ժողովրդի պահանջով չվերադառնար Բաքու, ապա Ադրբեջանը կկորցներ պետական անկախությունը»:**

**Դե թող այդ դրոշակաձողն էլ դառնա Հեյդար Ալիեւի «ղարաբաղյան քաղաքականության հուշասյունը»: Որքան էլ դժվար լինի հաշտվել մեր հայրենիքի մի հատվածի օկուպացիայի հետ, մենք, այդուհանդերձ, հանդուրժողաբար կվերաբերվենք Իլհամ Ալիեւի որդիական սիրո զեղումներին, եթե նա ցանկություն ունի իրավաբանորեն ամրագրել այն սահմանները, որ անկախ Ադրբեջանի համար մեծագույն ջանքերով գծել եւ սերունդներին է փոխանցել «համազգային առաջնորդ» հայրը՝ Արաքսից ՝ «Նարգիզթեփե», այդտեղից էլ՝ Օմարի բարձունք, որտեղ՝ դեպի Ադրբեջան նայող կեցվածքով կարելի է նաեւ Հեյդար Ալիեւի մոնումենտը կանգնեցնել: Թող այդ բարձրությունից նայի եւ սքանչանա Բաքվի «պետական դրոշի հրապարակով»:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Դա իմ ժողովուրդը չէ»

## *«Ժառանգությունը» թարմացնում է Տեր-Պետրոսյանի հիշողությունը*

«Ժառանգություն» խմբակցության ղեկավար **Ստյոպա Սաֆարյանը** երեկ «facebook» սոցիալական ցանցում մեկնաբանություններ կատարելիս հանկարծ հիշողության զարթոնք է ունեցել ու հրապարակավ մեղադրել Լեւոն Տեր-Պետրոսյանին մարտի 1-ի 10 զոհերի սպանության մեջ: «Մարտի 1-ին ժամը 10:30-ին Լեւոն Տեր-Պետրոսյանի տան մոտից զանգում են լրագրողներ եւ ասում, որ Տեր-Պետրոսյանը ժամը 11-ին պետք է ասուլիս տա: Բայց տան կողքը ոստիկանական կարդոն է կանգնած, եւ լրագրողներին թույլ չեն տալիս ներս մտնել: Մենք, 3 պատգամավորներս՝ ես, Վարդան Խաչատրյանն ու Զարուհի Փոստանջյանը, Ժաննա Ալեքսանյանն ու Սոնա Մուրադյանը իմ ծառայողական մեքենայով գնում ենք Լեւոն Տեր-Պետրոսյանի տուն, ոստիկաններից պահանջում բացել ճանապարհը»: Սաֆարյանը գրում է, որ ասուլիսից հետո մոտեցել են ՀԱԿ առաջնորդին ու ասել, որ Ֆրանսիայի դեսպանատան մոտ սկսվել է առճակատում, եւ ոստիկանները հարվածում են մարդկանց:

Սաֆարյանի հարցին՝ ի՞նչ փոխանցի այնտեղ հավաքված ժողովրդին որպես ուղերձ, ՀՀ առաջին նախագահն ասել է. «Ես չգիտեմ, թե ովքեր են հավաքված այնտեղ: Դա իմ ժողովուրդը չէ: Իմ շտաբը այնտեղ որեւէ հավաք չի պլանավորել»: Սաֆարյանն անկեղծանում է, որ Տեր-Պետրոսյանի նման հայտարարությունից հետո հասկացել է. նախկին նախագահը խուսափում է պատասխանատվությունից:

«Իհարկե չեմ կարող ասել, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը քրեական պատասխանատվություն է կրում 10 զոհերի համար, բայց քաղաքական պատասխանատվություն կրում է: Քանի որ եթե ինձ համար տեսանելի էր, որ արյուն է թափվելու, ինքը հաստատ դա պետք է տեսներ: Հետեւաբար կամ պետք է գար, կամ մարդկանց տուն ուղարկեր»:

Զարմանալի է, որ մարտի 1-ի իրադարձությունների վերաբերյալ իր հիշողությունները Սաֆարյանը ներկայացնում է միայն 3 տարի անց: Դեռեւս մեկ ամիս առաջ՝ մարտի 1-ին, Սաֆարյանը «Ժառանգության» առաջնորդի ու մնացած կուսակցականների հետ այցելել էր Մատենադարանի հարթակ՝ ՀԱԿ հանրահավաքին ներկա գտնվելու եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ սգալու մարտի 1-ի զոհերի հիշատակը: Այդ ժամանակ Սաֆարյանը չէր հիշում վերոնշյալ իրադարձությունն ու խոսակցությունը: Իհարկե հիշում էր, պարզապես գոյություն ունեն քաղաքական նպատակահարմարություններ:

Իհարկե, յուրաքանչյուր քաղաքական ուժ, կախված այդ նպատակահարմարություններից, ունենում է հիշողության կորուստներ ու զարթոնքներ, սակայն այս պարագայում առավել կարեւոր հարց է, թե ինչու հենց հիմա Սաֆարյանը հիշեց այդ ամենը: Բացատրությունը պարզ է: Արդեն մեկ ամիս «Ժառանգությունը» պայքարում է քաղաքական արեւի տակ իր տեղը պահելու համար: Սակայն իշխանությունը մի կողմից, ՀԱԿ-ը՝ մյուս, համառորեն փորձում են բացատրել, որ «Ժառանգության» լիմիտը սպառվել է:

ՀԱԿ առաջնորդի մարտիմեկյան բացահայտ արհամարհանքը, մարտի 17-ին «Ազատության» հրապարակում Ռ. Հովհաննիսյանին չմոտենալն ու չբարեւելը փաստեցին. ՀՀ առաջին նախագահը «Ժառանգությանն» առանձին ընդդիմադիր ուժ չի ընկալում եւ նախընտրում է ընդդիմադիր դաշտում մենակ գործել: Իհարկե այս հարցում ունենալով իշխանությունների «դոբրոն»: Որ իշխանությունների ու ՀԱԿ-ի միջեւ համաձայնություն կա՝ անհերքելի է: Գուցե հետագայում այդ համաձայնությունը վերածվի խորհրդարանում աթոռների բաշխմանը. այս պահին սահմանափակվում է նրանով, որ իշխանությունները թույլ են տալիս ՀԱԿ-ին նվաճել ու վերանվաճել «Ազատության» հրապարակը: Վստահաբար ապրիլի 8-ի հանրահավաքում էլ ՀԱԿ-ը կրկին կվերանվաճի «Ազատության» հրապարակը, սակայն նվաճելուց մի քանի ժամ անց Լեւոն Տեր-Պետրոսյանը կասի. «Շնորհակալություն ուշադրության համար. բարի գիշեր»:

ՀԱԿ առաջնորդը կսահմանափակվի այսքանով՝ պայմանավորվածությունը չխախտելու համար: Մինչ ՀԱԿ-ը փորձում է մնալ ընդդիմադիր դաշտում՝ միաժամանակ գործարքներ ստորագրելով իշխանության հետ, ձեռքերը ծալած չի նստում «Ժառանգությունը»:

15 օր հացադուլի նստելով՝ **Րաֆֆի Հովհաննիսյանն** իր վրա կենտրոնացրեց բոլորի ուշադրությունն ու թեպետ հացադուլի ավարտին, բոլորն իրար հարց էին տալիս՝ «Ինչո՞ւ նստեց, ինչո՞ւ հրաժարվեց», այնուամենայնիվ, Րաֆֆին կարողացավ բացահայտել ՀԱԿ առաջնորդի էությունը, անհանդուրժող կեցվածքն ու նարցիսիզմը՝ կամ ես, կամ ոչ ոք:

Ստյոպա Սաֆարյանի facebook-յան մեկնաբանությունն էլ նույն նպատակն էր հետապնդում՝ ցույց տալ Լեւոն Տեր-Պետրոսյան առաջնորդի իրական պատկերը:

ՀԱԿ համակարգող **Լեւոն Զուրաբյանին** էլ Սաֆարյանի այս հայտարարությունը հիշեցրել է բարոն Մյունհաուզենին: «Ովքեր ուզում են հավատալ Մյունհաուզենին, թող հավատան: Ոստիկանների հետ ունեցած բազմաթիվ բանակցություններից հետո ես եկել եմ Տեր-Պետրոսյանի տուն, որտեղ ոչ ոք չի եղել: Դա սուտ է: Այո, մենք բոլորս կրում ենք քաղաքական պատասխանատվություն», հայտարարել է նա:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




# Գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ տաք քննարկումներ Ազգային ժողովում

**Ազգային ժողովում գյուղատնտեսությանը վերաբերող խորհրդարանական լսումների ժամանակ երեկ ելույթ ունեցավ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, որը փաստորեն հանդես եկավ չլուծված հարցերի վերաբերյալ «ինչուներ» հնչեցնողի դերից:. «Ինչո՞ւ է ընդունված ազգային ծրագիրը, որ այդքան շատ քննադատության է ենթարկվում, ինչո՞ւ չեն լուծվել գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումները, գուցե կա՞ն պատճառներ, որ այդ ծրագիրը չի կատարվել, հատկապես եթե հաշվի առնենք, որ արդեն 2011 թ. է, իսկ ծրագիրը մինչեւ 2012 թ. է ներառում», ասել է նա գյուղատնտեսության զարգացման ազգային ծրագրի վերաբերյալ՝ հավելելով, որ չիրագործվող ծրագրի պարագայում ոլորտի զարգացման մասին խոսք լինել չի կարող: Ըստ ԱԺ նախագահի՝ նոր հեծանիվ ամենեւին էլ պետք չէ հորինել, հարկավոր է ուղղակի գտնել կոնկրետ ուղղություններ, որոնք կնպաստեն գյուղատնտեսության զարգացմանը: Եվ նշեց մի քանիսը՝ հարկավոր է նվազեցնել գյուղացուն տրվող վարկերի տոկոսադրույքները, հավելյալ սուբսիդավորել այն գյուղացիներին, որոնք բնակվում են հատկապես անբարենպաստ կլիմայական պայմաններում, 20 տոկոսով սուբսիդավորել գյուղացուն՝ գյուղտեխնիկա ձեռքբերելու համար:**

**Իսկ գյուղնախարար Սերգո Կարապետյանն իր խոսքում հետաքրքրական ձեւակերպում արեց, թե մեր երկրում ոչ թե շուկա է, այլ «բազար՝ բառիս բուն իմաստով». «Տնտեսվարող սուբյեկտներն իրենց ապրանքները գյուղացիներին վաճառում են շատ բարձր գներով, ինչն ուղղակի անթույլատրելի է: Մինչեւ շուկան վերջնականապես չկարգավորվի, պետությունը պետք է ներկրի այդ ապրանքներն ու ցածր գներով տրամադրի ֆերմերներին». գյուղնախարարը նկատի ուներ, որ գյուղատնտեսության զարգացումն ապահովելու համար առաջիկա գոնե հինգ տարիների ընթացքում պետությունն ինքը պետք է ներկրի այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են թունաքիմիկատները, տեխնիկան, դիզելային վառելիքը:**

**Խորհրդարանական լսումները ներկայացուցչական էին եւ տաք, բայց կարեւորը տաքությունը չէ, այլ ինչ-որ վճիռների վրա հետագայում ազդեցություն ունենալը:**

**Ս. Խ.**

# Բրունո Դյութուա. Orange նորարարության մրցանակը նոր հորիզոններ կբացի հայ ուսանողների առջեւ

Երեկ Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան** ԵՊՀ ՏՏ կենտրոնում հանդիպեց ուսանողների հետ՝ լավագույն ուսանողների հետ ծանոթանալու եւ Orange նորարարության մրցանակի վերաբերյալ վերջիններիս հետաքրքրող հարցերին պատասխանելու:



Նորարարության մրցույթը մեկնարկել է մեկ ամիս առաջ Երեւանի պետական համալսարանի եւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) երեւանյան եւ վերջիններիս մարզային մասնաճյուղերի ուսանողների համար: Մրցույթում լավագույն նորարարական գաղափարի հեղինակ ճանաչված ուսանողը կմեկնի Ֆրանսիա՝ 6-ամսյա վճարովի պրակտիկայի Orange-ի գիտահետազոտական լաբորատորիաներից մեկում եւ կաշխատի նորարարական նախագծերի վրա:

«Հայաստանում ես հանդիպել եմ բազմաթիվ տաղանդավոր երիտասարդների, որոնք եթե խրախուսում ու աջակցում ստանան, կարող են փայլուն նախագծերի հեղինակ դառնալ: Orange Արմենիան մեծ միջազգային խմբի մասն է կազմում եւ մենք ուզում ենք տալ այդ երիտասարդներին հնարավորություն՝ փորձել իրենց եւ կատարելագործվել մեր խմբի բազմաթիվ գիտահետազոտական լաբորատորիաներից մեկում: Վստահ եմ, որ հաղթողը կվերադառնա Հայաստան որպես պատրաստի մասնագետ եւ օգտակար կլինի ինչպես իր համալսարանին, այնպես էլ երկրին», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան ուսանողների հետ հանդիպման ժամանակ:

Երկու համալսարանների ռեկտորները ողջունել են Orange-ի այս նախաձեռնությունը եւ ամեն կերպ աջակցել մրցույթի անցկացմանը՝ հատկապես կարեւորելով հայ ուսանողների համար այսօրինակ աշխատանքային պրակտիկայի ընձեռած ապագա հնարավորությունները, ինչպես նաեւ հետագայում գիտական աշխատանքի պատրաստվող մասնագետների համար նորանոր հմտությունների ձեռքբերումը:

Մրցույթին կարելի է մասնակցել՝ մինչեւ ապրիլի 20-ը գրանցվելով Orange-ի պաշտոնական վեբկայքում հատուկ ստեղծված կայքէջում եւ էլեկտրոնային ձեւաչափով ուղարկելով նախագիծը եւ կենսագրությունը:

11 հոգուց կազմված ժյուրին, որի կազմում են Orange Արմենիայի հայ եւ արտասահմանցի 7 մասնագետներ, Orange Lab-երի 2 ներկայացուցիչ, ինչպես նաեւ մեկական ներկայացուցիչ ԵՊՀ-ից եւ ՀՊՃՀ-ից, կգնահատի ներկայացված գաղափարներն ըստ հետեւյալ չափանիշների. նորարարական, հետաքրքրական, օգտակար եւ հեշտ կիրառելի: Գաղափարը պետք է վերաբերի հեռահաղորդակցության ոլորտին (ցանց եւ ինժեներիա, ծրագրային ապահովում եւ հավելվածներ, շարժական կապի նորարարական եղանակներ, սարքավորումներ եւ այլն) եւ ներկայացված լինի անգլերեն կամ ֆրանսերեն: Այս լեզուներից մեկի բավարար տիրապետումը անհրաժեշտ է հետագայում Ֆրանսիայում պրակտիկան անցնելու համար: Մրցույթի հաղթողի անունը կհրապարակվի Orange-ի կայքում մայիսի 20-ին:

Մրցույթի մասնակցության մասին մանրամասն տեղեկությունների համար կարելի է այցելել www.orangearmenia.am/innovation-prize/ կայքէջը:

# Ոռոգման ջրի սակագինը կմնա անփոփոխ

**Հայաստանում ոռոգման համակարգը կառուցվել է դեռ խորհրդային տարիներին: Տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ԾԻԳ-ի տնօրեն Ադիբեկ Ղազարյանի փոխանցմամբ՝ հայաստանյան ոռոգման համակարգը սպասարկում են 87 ջրամբարներ: Համակարգում այսօր առկա են տարբեր խնդիրներ, որոնք, ըստ Ա. Ղազարյանի, կարելի է բաժանել 2 հիմնական մասերի՝ կապված տեխնիկական վիճակին ու շահագործման, պահպանման ծախսերին: Երեկ «Հենարան» ակումբում Ադիբեկ Ղազարյանը նշեց, որ ոռոգման ջրի ինքնարժեքը բավականին թանկ է, նույնիսկ ավելի թանկ, քան այսօր վճարում է գյուղացին, ինչը մեծապես պայմանավորված է նաեւ էլեկտրաէներգիայի ծախսով. «Ինքնարժեքի 50 տոկոսը կազմում է էլեկտրաէներգիայի արժեքը»: Ոռոգման համակարգը պահպանելու համար տարեկան պահանջվում է 8,5-9 միլիարդ դրամ: Ըստ բանախոսի՝ անցյալ տարի գյուղացիներից հավաքած գումարը կազմել է 3,5 միլիարդ դրամ, իսկ 4 միլիարդ 650 միլիոն դրամ էլ 2010-ին սուբսիդավորել է պետությունը: Ադիբեկ Ղազարյանն ասում է, որ պետությունը ջուրը ձրի է տալիս, սակայն մինչեւ ջրամբարից ջուրը հասնում է գյուղացուն, հենց այդ ընթացքում էլ գոյանում են ծախսերը: 1 խմ ոռոգման ջրի սակագինը 11 դրամ է, եւ այս տարի սակագինը չի փոխվելու: Ըստ Ա. Ղազարյանի՝ ջրի ինքնարժեքն ավելին է՝ 18 դրամ, իսկ տարբերությունն ամեն տարի սուբսիդավորում է պետությունը:**

**Մյուս բանախոսը «Վաղարշապատ» ջրօգտագործող ընկերության գործադիր տնօրեն Սուրիկ Սեդրակյանն էր, որն ասուլիսի ընթացքում հակիրճ ներկայացրեց իրենց ընկերության գործունեությունը:**

**Ի. Պ.**

# Նոր հետվճարային սակագնային պլան՝ «Անձնական»

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, ընկերությունը առաջարկում է նոր՝ «Անձնական» հետվճարային սակագնային պլանը, որպիսին առաջին անգամ է ներկայացվում հայաստանյան շուկայում: Այն թույլ է տալիս լիովին վերահսկել հաղորդակցման ծախսերը, 10 հազար դրամ ամսավճարի դիմաց բաժանորդին տրամադրելով ամսական 5000 անվճար րոպե ներցանցային եւ 200 անվճար րոպե դեպի ՀՀ այլ ցանցեր (ներառյալ քաղաքային ցանց) զանգեր, 200 ՄԲ ծավալով տվյալների փոխանակում, 200 SMS հաղորդագրություն ուղարկելու հնարավորություն՝ բոլոր օպերատորների ցանցեր: Այս ամենը սպառելուց հետո, «Վիվասել-ՄՏՍ»-ի ցանցում զանգի 1 րոպեի արժեքն է 15 դրամ, դեպի այլ բջջային ցանցերը՝ 35 դրամ, դեպի քաղաքային ցանց՝ 25 դրամ եւ այլն:

Ա. Ս.

# Ո՞րն են ամուսնալուծությունների իրական պատճառները

## *Պարզաբանում են հոգեւորականն ու հոգեբանները*

Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալներով, 2009 թվականի համեմատությամբ, Հայաստանում անցյալ տարի գրանցված ամուսնությունների թիվը նվազել է եւ կազմել ընդամենը 17984: Փոխարենն ավելացել են ամուսնալուծությունները, անցյալ տարի գրանցվել է ամուսնալուծության 2997 դեպք: 2010-ին, 1000 ամուսնական զույգի հաշվով, գրանցվել է 167 ամուսնալուծություն, իսկ 2009-ին՝ 151:

Ամուսնալուծությունների պատճառները տարաբնույթ են: Հոգեբան **Մարիամ Մեհրաբյանն** էլ անդրադառնալով մեկ այլ վիճակագրության՝ ասում է, որ վերջին տարիներին զույգերն ավելի շատ ամուսնալուծվել են ամուսնանալուց հետո 3-4 տարվա ընթացքում: Հոգեբան Մեհրաբյանի խոսքով՝ ամուսնական կյանքի առաջին 3 տարիները համարվում են հարմարվելու տարիներ. «Փաստորեն, զույգերը միմյանց հարմարվելու խնդիրներ են ունեցել»: Զրուցակիցս ավելացնում է, որ մեծ ընտանիքներով ապրելը կարող է դառնալ ամուսնալուծության պատճառ. «Ինչքան մեծ է ընտանիքը ու ինչքան շատ են տան անդամները, այնքան շատ են նորաստեղծ զույգի դժվարությունները: Կարծում եմ՝ շատ ճիշտ է, որ զույգերն առանձին են ապրում»:

Նոր ամուսնացած երիտասարդներն առանց այն էլ խնդիր ունեն միմյանց հարմարվելու, իսկ երբ դրան գումարվում է ընտանիքի մյուս անդամների հետ հարմարվելը... Չէ՞ որ ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը՝ սկեսուրը, սկեսրայրը, տղան, հարսը, տալը կամ տեգրը, տատիկը կամ պապիկն ունեն իրենց իրավունքներն ու ապրելաձեւը: Երբ սրան էլ գումարվում է փոքր բնակարանում ապրելու հարցը, ուստի նման պայմաններում առաջանում են հազարումի խնդիրներ, որոնք ազդում են նաեւ նորաստեղծ զույգի ամուսնական կյանքի վրա:

«Այգ» հոգեբանական ծառայությունների գլխավոր մասնագետ **Ռուբեն Պողոսյանը** նշում է, որ նախկինում հայերն ապրել են գերդաստանով, ինչն ազգապահպան նշանակություն է ունեցել: Թեեւ հիմա գերդաստաններով չեն ապրում, սակայն հաճախ մեծ ընտանիքներով ապրելուց խուսափելն անհնար է լինում. նախ սոցիալական պայմանների պատճառով, քանի որ երիտասարդներն առանց ծնողների օժանդակության ինքնուրույն ապրել չեն կարողանում, երբեմն էլ ծնողները չեն կարողանում ապրել առանց երեխաների: Բացի դրանից՝ կա նաեւ մենթալիտետի խնդիր, առանձին ապրելուն հոգեբանորեն ոչ բոլոր երեխաներն ու ծնողներն են պատրաստ:

Այս թեմայով «**Ազգը**» զրուցել է նաեւ **Վարդան աբեղա Նավասարդյանի** հետ, որը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրենն է: Հայր Վարդանը, խոսելով մեծ ընտանիքներով ապրելու ավանդույթից, համաձայնում է, որ ավանդույթն իրեն սպառել է: «Այսօր աշխարհն ու հասարակությունը յուրաքանչյուր անհատի թելադրում են վարել ինքնուրույն կյանք, անկախ նրանից՝ մարդն ամուսնացած է, թե ոչ», ավելացնում է հայր Վարդանը, ապա ընդգծում. «Նախընտրելի է, որ երիտասարդ զույգերն առանձին ապրեն: Ավետարանում Հիսուս Քրիստոսը հստակ ասում է. «Ամուսինը թո՛ղ թողնի իր հորն ու մորը եւ գնա իր կնոջ հետեւից»: Նույնն էլ ասվում է կնոջ վերաբերյալ. «Կինն էլ թո՛ղ թողնի իր ծնողներին ու գնա ամուսնու հետեւից»: Հայր Վարդանը եւս ընդգծում է, որ մեծ ընտանիքներով ապրելը կարող է դառնալ ամուսնալուծության պատճառ:

Հայ առաքելական եկեղեցին անհանգստացած է տարեցտարի ավելացող ամուսնալուծությունների թվով եւ ընտանիքներում ձեւավորվող անառողջ մթնոլորտով: Հայր Վարդանը կարծում է, որ ամուսնության խորհուրդը խաթարվել է. հաճախ երիտասարդներն ամուսնանում են ոչ թե մնայուն, այլ անցողիկ արժեքներին հետեւելով. «Ամուսնանում են տարբեր նկրտումներով՝ դրամի, սեռական ցանկություններին հագուրդ տալու համար եւ այլն»: Իհարկե, սա չի վերաբերում բոլորին. կան շատ զույգեր, որոնք ամուսնանում են իրար սիրելով եւ կարողանում են հաղթահարել ամուսնական կյանքի ընթացքում առաջ եկած հոգեբանական ու սոցիալական դժվարությունները, հետեւապես կարողանում են նաեւ ամուր պահել իրենց ընտանիքները, որտեղ հոգեւոր մթնոլորտի պահպանումը շատ կարեւոր է: Հայր Վարդանի փոխանցմամբ՝ հոգեւոր հովիվն ընտանիքներում անելիք ու դերակատարություն ունի, թեկուզ հենց հոգեւոր մթնոլորտի պահպանման առումով: Զրուցակիցս նշում է, որ Ս. Ղեւոնդյանց տոնի առիթով վերջերս Մայր աթոռում քահանայից հավաք է կազմակերպվել՝ նախագահությամբ Ամենայն հայոց կաթողիկոսի: Ավանդական հավաքին մասնակցել է նաեւ հայր Վարդանը, այս անգամ քննարկվող թեման եղել է «Ընտանիքն ու հոգեւոր հովիվը»: Քննարկման եզրահանգումների վերաբերյալ Վարդան աբեղան ասում է. «Հստակորեն շեշտվել է, որ հոգեւոր հովիվը պսակի խորհուրդը բացատրելուց զատ հետագայում ընտանիքների հետ պետք է կապ պահպանի, ինչն իրականացնելու համար առաջարկվել են տարբերակներ՝ ծխական մասյաններ ունենալու եւ համացանցի միջոցով կապ ստեղծելու վերաբերյալ»: Վարդան աբեղայի խոսքով՝ համացանցի միջոցով հնարավոր կլինի ընտանիքներին փոխանցել համապատասխան տեղեկատվություն եւ խորհրդատվություն: Բացի գաղտնի խորհրդատվություն տրամադրելուց՝ ինտերնետային ցանցերը հնարավորություն կտան, որ ընտանիքները գտնեն իրենց հոգեւոր հովվին: Հայր Վարդանը մեկ այլ խնդրի եւս անդրադառնում է. «Հիմա ոչ բոլորն են պատրաստ իրենց խնդիրներով մոտենալու հոգեւոր հովվին ու հաղորդակցվելու նրա հետ»:



Ընտանիքների համար այսօր օրակարգային խնդիրներ են նաեւ սոցիալական ծանր վիճակն ու աշխատաշուկայի պակասը: Ռուբեն Պողոսյանն ասում է, որ հայկական ընտանիքները պահպանելու համար հարկավոր է կանգնեցնել Հայաստանից դեպի օտար երկրներ մարդկանց արտահոսքը, ինչը հնարավոր կլինի միայն սոցիալական խնդիրների լուծման դեպքում: Քիչ չեն դեպքերը, երբ ընտանիքի հայրը մեկնում է արտագնա աշխատանքի եւ խոստանում փող ուղարկել՝ երեխաներին մեծացնելու, ուսման վարձ տալու կամ երեխային որեւէ բուհ ընդունելու համար: Ցավոք, քիչ չեն նաեւ դեպքերը, երբ հայրը ոչ մի գումար էլ չի ուղարկում: Լինում են նաեւ դժբախտ պատահարներ, երբ շինարարական աշխատանքների ժամանակ անզգույշ են լինում, կոտրում են ձեռքն ու ոտքը, իսկ ինչքա՞ն մահվան լուրեր ենք լսել եւ ինչքա՞ն լուրեր, երբ ամուսինը Ռուսաստանում արդեն ռուս կին կամ սիրուհի եւ նույնիսկ արդեն երեխա ունի: Այսպես քայլ առ քայլ քայքայվում են հայկական ընտանիքները: Շատերը երբեմն մեղադրում են ոչ թե ամուսիններին, այլ կանանց, որոնք տղամարդկանց առաջ հազարումի պահանջներ են դնում ու պահանջում կատարել դրանք ինչ գնով էլ լինի: Ինչեւէ, հաճախ ընտանիքը պահելու ծանր բեռն ընկնում է կնոջ ուսերին, երբեմն կանայք իրենք են մեկնում արտագնա աշխատանքի, օրինակ՝ Միացյալ Նահանգներում կամ Եվրոպայում խնամում են մի հիվանդ ու ծեր տատիկի: Իսկ ամուսինը Հայաստանում մնում է առանց կնոջ. ինչ արած, սոցիալական պայմաններն են ստիպում: Կինը արտասահմանից գումար է ուղարկում, իսկ ամուսինն այստեղ խնամում է երեխաներին:

Հայր Վարդանն ընդգծում է, որ այսօր շարունակ խոսում են կնոջ դերի բարձրացումից, բայց որեւէ մեկը չի խոսում հայր հասկացության խաթարումից: Հաճախ ընտանիքի հայրը ճարահատյալ կատարում է մորը վերապահված գործերը, այսինքն՝ մայրը գնում է աշխատանքի, իսկ հայրը տանը խնամում է երեխաներին: Իհարկե, տղամարդը նման գործերում երբեմն պետք է օժանդակի կնոջը, սակայն միայն օժանդակի, ոչ թե մշտապես կատարի կնոջ գործերը: «Ընտանիքում, որտեղ տղամարդու գործն անում է կինը, իսկ կնոջ գործը՝ տղամարդը, այդ ընտանիքին լավ ապագա չի սպասում», ասում է հայր Վարդանը, ապա հավելում. «Հայերս մի վտանգավոր արտահայտություն ունենք, ասում ենք՝ ինչ տղամարդ կին է, մինչդեռ կինը չի կարող տղամարդ լինել, կինը պետք է կանացի լինի: Ըստ իս՝ տղամարդու՝ հայր, ընտանիքի հովիվ ու առաջնորդ լինելու բանաձեւն ինչ-որ առումով աղճատվել է, եւ նման դեպքում առողջ ընտանիք լինել չի կարող»: Հայր Վարդանի խոսքով՝ հայր հասկացության խաթարումն ինչ-որ առումով պայմանավորված է սոցիալական խնդիրներով. «Սակայն դա չի նշանակում, որ նյութապես ապահովված ընտանիքներում չկա այդ խնդիրը»:

Ընտանիքների քայքայման ու ամուսնալուծությունների պատճառներից են սոցիալական ծանր պայմաններն ու սոցիալ-հոգեբանական խնդիրները: Հարկավոր է առաջին հերթին լուծել հենց այս խնդիրները: Ռուբեն Պողոսյանը նշում է, որ պետք է լինեն սոցիալական ավելի լավ պայմաններ, որպեսզի երիտասարդների համար ընտանիք կազմելը չդառնա բեռ:

Ամուսնալուծությունների պատճառները տարբեր են՝ սկսած սոցիալականից, վերջացրած սեռական խնդիրներով: Ոչ բոլոր զույգերն են բարձրաձայնում իրենց ընտանիքների քայքայման իրական պատճառները, մանավանդ, եթե դրանք առնչվում են սեքսուալ կյանքին: Ամուսնալուծված մի քանի մարդկանցից «**Ազգը**» փորձեց հարցազրույց վերցնել, սակայն նրանք գերադասեցին չխոսել այս թեմայով, առավել եւս՝ հրապարակավ: Հայերիս մեջ մի վատ սովորություն կա, սիրում ենք անընդհատ փնտրել մեղավորների՝ ամուսնալուծությունների դեպքում մեղադրում ենք կա՛մ կնոջը, կա՛մ ամուսնուն, կամ «չարաբաստիկ» սկեսրոջը, այնինչ մոռանում ենք, որ ամեն մարդ ինքն է պատասխանատու իր կյանքի համար, եւ բացի դրանից՝ սիրում ենք տեսնել ուրիշի աչքի փուշը՝ չտեսնելով մեր աչքի գերանը:

Շատ կարեւոր է, որ երիտասարդները միմյանց սիրելով ամուսնանան, որպեսզի նվազի ամուսնալուծությունների թիվը: Ամուսնական կյանքի խնդիրները հաղթահարելու համար թերեւս սերն ամենամեծ ուժը կլինի:

Առաջիկա համարներից մեկում «**Ազգը**» այս թեմային կրկին կանդրադառնա:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Տարօրինակ ջատագովություն

«Երկիր Մեդիա» հեռուստաընկերության «Հրապարակ» հաղորդաշարի փետրվարի 24-ին եթեր հեռարձակված հաղորդումներից մեկին՝ նվիրված հայոց անունարանի անաղարտության խնդրին, տողերս գրողն անդրադարձել է գրեթե անմիջապես («Երկիր», 2 մարտի 2011). այնքա՛ն կարեւոր էր արծարծվող թեման, բայց նաեւ հաղորդման մասնակիցներից Լիա Ավետիսյանի միջամտությամբ այնքա՛ն հաճախակի էր այդ հաղորդումը հայտնվում զավեշտի եւ անհեթեթության սահմանին: Ուստի զարմանալի էր «**Ազգ**» օրաթերթում կարդալ **Արամայիս Ղազարյանի** «Հայ անունը՝ պատիվը մեր» հոդվածը, որը փաստորեն ուշացած գովքն էր մեկի եւ ջատագովությունը մի կեղծ հայրենասիրական գաղափարախոսության, որոնք էլ քննադատության թիրախ էին դարձել:

Հենց սկզբից ասեմ, որ անվերապահորեն համամիտ եմ հայոց անունարանի այսօրվա անմխիթար վիճակի, նրա անաղարտության կարեւորության, այս ոլորտում պետական հստակ քաղաքականության մշակման ու իրականացման վերաբերյալ Ա. Ղազարյանի մտահոգություններին: «**Ազգ**» օրաթերթը տողերս գրողին բազմաթիվ անգամներ է հնարավորություն ընձեռել՝ հանդես գալու ազգամշակութային այս կարեւորագույն խնդրի վերաբերյալ դիտարկումներով եւ առաջարկություններով: Հետեւաբար ինձ համար բնավ էլ միեւնույնը չէ, թե Ա. Ղազարյանն իր հոդվածում ի՛նչ ելակետից է մոտենում հայոց անունարանը մաքրելու խնդրին, քանզի այն հիացական վերաբերմունքը, որ նա ունի Լ. Ավետիսյանի ստուգաբանական «գյուտերի» ու լեզվաբանական «նոր տեսության» նկատմամբ, փաստորեն ի սկզբանե բացառում է որեւէ անհրաժեշտություն՝ մաքրելու հայոց անունարանը, քանզի... դրա հարկը չկա: Ինչո՞ւ՝ կտեսնենք ստորեւ:

Ա. Ղազարյանին «Երկիր Մեդիայի» վերոնշյալ հաղորդման մեջ դուր չի եկել, որ իբր թույլ չեն տվել Լիա Ավետիսյանին՝ ըստ հարկի հրապարակ գալ հայոց անունների վերաբերյալ իր հույժ ժամանակակից մեկնաբանություններով: Հիմա փորձեմ կարճառոտ անդրադառնալ իր լեզվափիլիսոփայությունը հաղորդավարի «մեղքով» շարադրել չկարողացած Լ. Ավետիսյանի նոր «գաղափարախոսությանը», որը կարելի է ամփոփել Ա. Ղազարյանի հոդվածի մի բնութագրական ձեւակերպմամբ. «Իրենց բնօրրան դիտվող Հայաստանից արիական ցեղերը սփռվելով աշխարհով մեկ՝ տարածել են հայկական արժեքները, այդ թվում՝ անուն-ազգանունները»:

Այս «հայրենասիրական» պնդումը, անշուշտ, գոնե մի քանի օրինակով պետք էր փաստարկել, ինչն էլ հեռուստադիտողի համար խնդրո առարկա հաղորդման ժամանակ արեց Լ. Ավետիսյանը՝ անվերապահ եւ անառարկելի: Նա, իրավամբ, միանգամայն «նոր լույսի ներքո ստուգաբանեց Ալեքսանդր, Ռոման, Իզաբելլա անունները» (Ա. Ղազարյան): Այո, մենք էլ ենք վկայում՝ նոր լույսի, բայց՝ զարմանալի լույսի: Որովհետեւ, եթե տիկնոջ ստուգաբանությամբ Իզաբելլան «բնիկ հայկական» անուն է եւ նշանակում է «իզ Բելա»՝ «Բելի իզը»՝ «Բելի հետքը», եթե Ալեքսանդրը նույնպես «բնիկ հայկական» անուն է եւ նշանակում է «Ա/լ/-եկ անդր»՝ «Աստված եկավ այնտեղից», եթե հաղորդման մասնակիցներից մեկի հեգնանքով նետված խոսքը, թե, այդ դեպքում, Սաշիկն էլ է հայկական անուն, եւ դրան հետեւած տիկնոջ ակնթարթային արձագանքը՝ բա իհարկե՜, Սաշիկ նշանակում է «Աս /Աստ/ աշի»՝ «Աստված աշում՝ նայում է»,- ուրեմն մենք իրոք ներկա էինք զարմանալի ներկայացման, աբսուրդի թատրոնի: Եվ այդ ներկայացման «գործող անձերից» Լ. Ավետիսյանի ներկայությունն իսկապես այնքան էր աբսուրդ, որ մեղադրել այդ ներկայացման «բեմադրիչ»՝ հաղորդումը վարող Վ. Օնանյանին, կարծում եմ, այնքան էլ ազնիվ չէ:

Ա. Ղազարյանը, չգիտես ինչու, մոռացել է հոդվածում նշել, թե իր գոված «լեզվաբանի» կողմից ինչ փայլուն ստուգաբանության արժանացավ «Համլետ» անունը, ստուգաբանություն, որ կարող էր ամբողջությամբ բնորոշել Լ. Ավետիսյան ստուգաբանին: Նախ՝ վերստին հայտարարվեց, որ, ինչպես բոլոր նախորդները, այս անունն էլ «մաքուր հայկական» ծագում ունի եւ նշանակում է, ոչ ավելի, ոչ պակաս, «համից հագեցած» («համ» + լետ/լեթ/լեթվել (չափից դուրս ուտել)): Ստուգաբանական այս գյուտի «համն» էին դեռ վայելում հաղորդման մասնակիցներն ու հեռուստադիտողները, երբ Լ. Ավետիսյանը միանգամայն լուրջ հայտարարեց, որ ամենայն անուն, որ հիմա կրում են հայերը, առանց բացառության՝ հայկական է: Ընդամենը մի բացառություն կա, որի մասին տիկինը դեռ կխոսի: Իսկ երբ հաղորդման մասնակիցներից Անժելա Տերյանին առաջարկվեց փոխել իր ոչ հայկական անունը, Լ. Ավետիսյանը շտապեց կանխել՝ ինչո՞ւ փոխել, եթե «Անժելա»-ն հին հայկական անուն է՝ ծագած, ի՞նչ հունարեն-ինչ բան, Տորք աստվածության Անգեղ անվանումից՝ Անգեղ-Անգել-Անժել:

Ահա այս մակարդակի ստուգաբանություններին անշուշտ պիտի հետեւեր «գիտական» եզրահանգումը. հայ ժողովրդից է ծագում, հողագործության ու անասնապահության մշակույթի հետ մեկտեղ, անվանակոչության համաշխարհային մշակույթը նույնպես, որը հետո տարածվել է ողջ աշխարհում՝ բոլոր ժողովուրդների մոտ: Հետեւաբար, աշխարհում չկա որեւէ անուն, որ ծագումով հայկական չէ...

Ավարտելուց առաջ դարձյալ ընդգծեմ. անշուշտ արդարացի է Ա. Ղազարյանը, երբ գրում է հայոց անունարանը եւ հատկապես հայկական ազգանունները օտար եւ խորթ տարրերից ազատելու անհրաժեշտության մասին: Սակայն, իմ համոզմամբ, դա պետք է անել մի պայմանով՝ գոնե մոտավոր իմանալով այն սահմանը, որ բաժանում է բնիկը եւ օտարը, բնական ճանապարհով փոխառյալն ու հանգամանքների պարտադրածը, հարազատը եւ խորթը:

Մի բան, որ, ցավոք, չի կարելի ասել Լ. Ավետիսյանի ստուգաբանությունների մասին:

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Ձախողվեց նաեւ Բաքվում համաժողովրդական հանրահավաք կազմակերպելու ընդդիմության ապրիլի 2-ի փորձը

*Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները մարդու իրավունքների ոտնահարման համար մեղադրում են Իլհամ Ալիեւին*

Ինչպես տեղեկացրել էինք մարտի 23-ի համարում, ադրբեջանական ընդդիմությունը այլընտրանքային խորհրդարանի հաստատմամբ ապրիլի 2-ը հռչակել էր համաժողովրդական համատեղ հանրահավաքի օր Բաքվում՝ պայմանով, որ հակակառավարական ցույցերը տարածվեն Ադրբեջանի ողջ տարածքով: Ինչպես մարտի 11-ին «Ժողովրդական մեծ ցասումի» օրը, այնպես էլ ապրիլի 2-ին ադրբեջանական ոստիկանությունը բիրտ ուժի միջոցով ցրել է հանրահավաքի մասնակիցներին: Սակայն դա չի խանգարել, որ ընդդիմությունը Բաքվում հաջորդ հանրահավաքը ապրիլի 16-ին կազմակերպելու նոր որոշում ընդունի:

Հատկանշական է, որ այդ որոշումը պաշտպանել են այլընտրանքային խորհրդարանում չընդգրկված Դեմոկրատական, Քաղաքացիական միության, Լիբերալ եւ Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունները, իսկ Ադրբեջանի իսլամական կուսակցությունը նախընտրել է հանդես գալ առանձին նախաձեռնությամբ՝ բողոքի ցույցի օր նշանակելով ապրիլի 8-ը: Այլ կերպ՝ Ադրբեջանում մարտի 11-ի հանրահավաքից հետո ընդդիմության տեսանկյունից ձախողվել է նաեւ ապրիլի 2-ի հանրահավաքը այն տարբերությամբ, որ ադրբեջանական ոստիկանությունը եթե մարտի 11-ին ձերբակալել է հանրահավաքի 25 կազմակերպիչներին, ապա ապրիլի 2-ին ձերբակալվել է ավելի քան 150 մարդ: Ավելին, ձերբակալությունները կատարվել են ոչ միայն Բաքվում, այլեւ Կիրովաբադում, Սումգայիթում, ընդ որում հանրահավաքի կազմակերպիչների, ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարների հետ ձերբակալվածների թվում են հայտնվել նաեւ հոգեւորականները:

Ձերբակալությունների մասին տեղեկությունները, հենվելով Միջազգային համաներում կազմակերպության տվյալների վրա, ապրիլի 4-ի համարում հրապարակել է թուրքական «Դունյա բյուլտենի» լրատվական գործակալությունը, որին հաստատում է նաեւ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը: Ըստ թուրքական գործակալության, ապրիլի 2-ին Բաքվում համաժողովրդական հանրահավաք կազմակերպելու ընդդիմադիր կուսակցությունների չհաջողված փորձը լայն արձագանք է գտել ինչպես Ադրբեջանում, այնպես էլ արտասահմանում, ադրբեջանական հանրային հեռուստատեսությունն ու «մասնավոր» հեռուստաընկերությունները շարունակել են ընդդիմությանը հարուցվող «ավանդական» մեղադրանքները:

Ահա թե դրա առնչությամբ ինչ է գրում «Դունյա բյուլտենի» կայքէջը. «Եվ մարտի 11-ին ցույց կազմակերպելու համար փողոց դուրս եկած երիտասարդները, եւ ապրիլի 2-ի հանրահավաքի մասնակիցները երկրում հայտարարվեցին «հայրենիքի դավաճան»: Միաժամանակ նշվեց, որ ցուցարարները անկարգություններ են արել՝ հարձակվելով ավտոմեքենաների վրա, որոնց հետեւանքով տուժել են բազմաթիվ բնակարաններ, գործատեղերով հանդերձ: Մինչ Ադրբեջանի պետական հեռուստատեսությունը ցուցարարների անկարգությունների վերաբերյալ տեսանյութ էր հեռարձակում, ընդդիմության ղեկավարները նշեցին, որ անկարգություններն արել են իշխանությունների ուղղորդած սադրիչները»:

Մինչդեռ, Միջազգային համաներում կազմակերպությունը, ամերիկյան Ֆրիդըմ Հաուզը, Լրագրողների պաշտպանության կոմիտեն եւ Լրագրողներ առանց սահմանի կազմակերպությունը դեռեւս մարտի 11-ի նախօրյակին իշխանություններին նախազգուշացրել էին, որ բռնություն չկիրառեն ցուցարարների դեմ: Այս կազմակերպություններն արդեն թուրքական կայքէջի վկայությամբ, երկրում մարդու իրավունքների համատարած խախտումների համար մեղադրում են նախագահ Իլհամ Ալիեւին:

Ինչպիսի արդյունքի կհասնի ադրբեջանական ընդդիմությունը հաջորդ հանրահավաքով, ցույց կտա ժամանակը: Բայց որ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների Իլհամ Ալիեւին հասցեագրված մեղադրանքները հազիվ թե Ադրբեջանում իշխանափոխության հասցնեն, ակնհայտ է: Կարեւորը տվյալ դեպքում ոչ այնքան մեղադրանքների բնույթն է, որքան դրանց դրդապատճառները: Չի բացառվում, որ այդ մեղադրանքները պայմանավորված լինեն Ռուսաստանի հետ Ադրբեջանի վերջին շրջանում նկատելի դարձած մերձեցմամբ եւ դրանց նպատակը լինի ոչ թե իշխանափոխությունը, այլ արեւմտյան տերությունների համար Ադրբեջանի ներքին գործերին միջամտելու նախապայմանների ստեղծումը:

Եթե միջազգային վերոհիշյալ իրավապաշտպան կազմակերպությունները մարդու իրավունքների խնդիր ունենային, ապա նախքան ցուցարարների դեմ բիրտ ուժ կիրառելու մեջ Իլհամին մեղադրելը, կմեղադրեին ադրբեջանական այսպես կոչված ժողովրդին, որը հայ սպանելու համար ազգային հերոս է հռչակում մարդասպան ստահակին՝ կոչելով այդ ստահակի անունով հրապարակներ, փողոցներ, դպրոցներ, հավանաբար նաեւ զորանոցներ: Երբ որեւէ ժողովուրդ չունենալով այլ հերոս՝ մարդասպանին է հերոսացնում, ապա դադարում է լինել մարդկանց պատմականորեն կազմավորված սոցիալ-էթնիկ ընդհանրություն եւ վերածվում է ոհմակի: Ադրբեջանցի հրոսակի պարագայում մենք գործ ունենք բորենիների ոհմակի հետ, ընդ որում՝ պոչատ, քանի որ նախքան ղարաբաղյան պատերազմը Սումգայիթում, Կիրովաբադում եւ այլուր անպաշտպան հայ կանանց, ծերերի եւ երեխաների առջեւ հերոսացող այս հրոսակը ռազմի դաշտում հայ զինվոր տեսնելուն պես զենքը շպրտել եւ առանց հետ նայելու՝ փախել է դեպի Բաքու:

Միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին պետք է քաջ հայտնի լինի Ադրբեջանում Ռամիլ Սաֆարով կոչված մարդասպան ստահակի հերոսացումը: Նրանք պարզապես շրջանցում են, որ հավասարության նշան դնեն ադրբեջանական ոհմակի եւ հայ ժողովրդի միջեւ: Բորենիների ոհմակի վերածված ադրբեջանական հրոսակը եթե արժանապատվություն ունենար, մարդասպանին չէր հերոսացնի, ըստ երեւույթին՝ միջազգային այս կազմակերպություններն էլ, որքան իրավապաշտպան կոչվեն, սկզբունք չունեն, կամ դրանց սկզբունքը անսկզբունքայնությունն է: Ժողովուրդն իզուր չի ասել. «Շունը շնից, երկուսը մի տնից»: Ի դեպ, շներն ու բորենիները նույն ցեղին են պատկանում:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԱՂԵՏ

# «Ֆուկուշիմա-1»-ի ռադիոակտիվ ջրերը լցնում են ծովը

*Այդ ջուրը կվերամշակվի*



**Ճապոնիայում վթարված «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի օպերատոր TEPCO ընկերությունը երեկ սկսել է ռադիոակտիվ ջրերն արտանետել ծովի մեջ: TEPCO-ի ներկայացուցիչների տվյալներով, ԱԷԿ-ից ծովն է լցվելու ընդամենը 11,5 հազար տոննա ջուր: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը պարզաբանում է, որ ջրի արտանետման երկօրյա գործողությունն անհրաժեշտ է, որպեսզի պահեստարանում տեղ ազատվի ռադիոակտիվ իզոտոպներով էլ ավելի աղտոտված ջրի համար, որն արտահոսում է ԱԷԿ-ի երկրորդ ռեակտորից:**

**«Գործողությունն անհրաժեշտ է լայնընդգրկուն ռադիոակտիվ աղտոտումը կանխելու համար: Այդուհանդերձ մենք ափսոսանք ենք հայտնում ռադիոակտիվ ջրի արտանետման համար», հայտարարել է կառավարության գլխավոր քարտուղար Յուկիո Էդանոն: Նա ընդգծել է, որ, ըստ փորձագետների գնահատումների, աղտոտված ջրի արտանետումը չի վնասի ծովային էկոհամակարգին:**

**TEPCO ընկերությունը երեկ նաեւ հայտարարել է, որ սկսում է փոխհատուցումներ վճարել ԱԷԿ-ի շրջակա օտարման գոտուց տարհանված մարդկանց, չսպասելով վթարի վնասների հաշվարկմանը: Մարտի 11-ի տարերային աղետներից խափանված ԱԷԿ-ի հովացման համակարգերը մինչեւ օրս չի հաջողվում վերականգնել:**

**Ճապոնիայի իշխանությունները ապրիլի 4-ին ԱԷԿ-ի վթարի հետեւանքների վերացման գործում օգնություն են խնդրել Ռուսաստանից: «Ռոսատոմի» պաշտոնական ներկայացուցիչ Սերգեյ Նովիկովը ՌԻԱ գործակալության թղթակցին պատմել է, որ ճապոնական կողմը խնդրել է քննարկել հեղուկ ռադիոակտիվ թափոնների վերամշակման «Լանդիշ» կայանքի օգտագործման հարցը: Այդ կայանքը արտասահմանում հայտնի է Suzuran անունով: Այն ստեղծված է 1993-ին ատոմային սուզանավերի օգտահանման բնագավառում Ռուսաստանի եւ Ճապոնիայի կառավարությունների կնքած համաձայնագրի շրջանակներում: «Լանդիշի» ստեղծման աշխատանքները ֆինանսավորել է Ճապոնիան՝ հատկացնելով մոտ 35 մլն դոլար: «Լանդիշը» օգտագործվում է «Զվեզդա» գործարանում սուզանավերի օգտահանման ծրագրերում:**

# Հաիթիում նախագահ է ընտրվել Միշել Մարտելլին



Հաիթիում անցկացված նախագահական ընտրությունների 2-րդ փուլի նախնական արդյունքների համաձայն, նախագահ է ընտրվել Միշել Մարտելլին: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը՝ վկայակոչելով ընտրական հանձնաժողովի ներկայացուցչին:

Մարտելլին ստացել է ընտրողների քվեների 67,57 տոկոսը: Նրա մրցակցուհին՝ երկրի նախկին առաջին տիկին Միրլանդ Մանիգան ստացել է քվեների 31,74 տոկոսը: Պաշտոնական արդյունքները, սակայն, հրապարակվելու են միայն ապրիլի 16-ին:

Հաիթիում նախագահական ընտրությունների 2-րդ փուլը կայացավ 2011-ի մարտի 20-ին, ըստ որում նախապես Մարտելլին չպետք է մասնակցեր դրան:

Ընտրությունների 1-ին փուլը տեղի էր ունեցել 2010-ի նոյեմբերի վերջերին: Դրա պաշտոնական արդյունքների համաձայն, 2-րդ փուլ էր անցել Ժյուդ Սելեստենը, որը համարվում էր պետության գործող ղեկավար Ռընե Պրեվալի իրավահաջորդը:

Նախագահական ընտրությունների 1-ին փուլի արդյունքները Հաիթիում դժգոհության ալիք էին բարձրացրել: Հանրապետության բնակիչները հայտարարում էին, որ քվեների հաշվարկը կատարվել է խախտումներով եւ կեղծիքներով, իսկ ընտրությունների 2-րդ փուլ պետք է անցնի Մարտելլին: Ի վերջո, հենց նա էլ դարձավ նախագահության թեկնածու:

Հատկանշական է, որ Մարտելլին Հաիթիում հայտնի երաժիշտ է: Նրան աջակցում էր հաիթցի նշանավոր երաժիշտ Ուայքլեֆ Ջինը: Նա սկզբում ինքն էր ուզում իր թեկնածությունն առաջադրել Հաիթիի նախագահի պաշտոնում, բայց չկարողացավ, քանի որ կյանքի մեծ մասն անցկացրել է ԱՄՆ-ում:

# Լիբիայի ղեկավարությունը պատրաստ է քննարկել բարեփոխումների հարցը

*Արեւմուտքը կիբեռնետիկական զենք է կիրառում*



**Լիբիայի ղեկավարությունը պատրաստ է համաշխարհային տերությունների հետ քննարկել ճգնաժամի քաղաքական կարգավորման ուղիների հարցը: Այդ մասին երեկ հայտարարել է Լիբիայի կառավարության ներկայացուցիչ Մուսա Իբրահիմը: Տրիպոլիում օտարերկրացի լրագրողների առջեւ նրա ունեցած ելույթը ուղիղ եթերում հեռարձակվել է բրիտանական «Սքայ նյուզ» հեռուստաալիքով:**

**Լիբիայի իշխանությունները «պատրաստ են քննարկել քաղաքական համակարգի բարեփոխումը, ընտրությունների կամ հանրաքվեի անցկացումը», ընդգծել է Իբրահիմը: Նրա խոսքերով, Մուամմար Քադդաֆին անպայման պետք է մնա երկրի ղեկավարի պաշտոնում: «Միայն նա կարող է անցման շրջանում երկիրը ղեկավարել որպես Լիբիայի միասնության երաշխավոր», ընդգծել է Իբրահիմը:**

**Կառավարության ներկայացուցիչն ավելացրել է, որ Լիբիայի ապագան պետք է տնօրինեն իրենք՝ լիբիացիները, այլ ոչ թե օտար պետությունները: «Մեր պայմանը շատ պարզ է. մեր փոխարեն մի՛ տնօրինեք մեր ճակատագիրը: Լիբիայի ապագան պետք է տնօրինեն լիբիացիները ընտրությունների կամ հանրաքվեի միջոցով»:**

**Նախօրեին «Նյու Յորք թայմսը» գրել էր, որ Քադդաֆիի որդիներից երկուսը առաջարկել են իշխանափոխության ծրագիր, ըստ որի Քադդաֆին պետք է հեռանա երկրի կառավարումից: Թերթը վկայակոչել էր սեփական աղբյուրներ:**

**Արեւմտյան կոալիցիայի երկրները Լիբիայում առաջին անգամ լայնորեն կիրառում են նորագույն կիբեռնետիկական ռազմական տեխնոլոգիաներ: Բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» թերթը հաղորդում է, որ մարտական գործողությունների երեք շաբաթներից հետո պարզ է դառնում, որ Լիբիայում տեղի ունեցող իրադարձությունները նման չեն նախորդ պատերազմներից որեւէ մեկին:**

**Նոր կիբեռնետիկական զենքը կարող է ընկճել հակառակորդի կամքը եւ նրան զրկել տեղեկատվությունից: Լիբիայի պատերազմում արեւմտյան կոալիցիայի ջանքերը հիմնականում ուղղված են համակարգչային գործողությունների իրականացմանը՝ հետախուզական գործողությունների զուգորդությամբ: Փորձագետների կարծիքով, տեխնիկական ներթափանցումը Լիբիա այժմ հասել է այնպիսի աստիճանի, որ ամեն պահի երկրի կենսապահովման գլխավոր համակարգերը կարող են կազմալուծվել համակարգչային մեկ կոճակի սեղմումով:**

ՏԱՐԵԼԻՑ

# Մեծ հայրենազուրկը

## 40 տարի առաջ երկրային կյանքին հրաժեշտ տվեց Իգոր Ստրավինսկին

2010-ի ապրիլին «**Ազգի**» ընթերցողներին արդեն տեղեկացրել ենք (տե՛ս ապրիլի 9-ի, մայիսի 1-ի համարները, ինչպես նաեւ մշակութային հավելվածը), որ ապրիլի 24-ին, ժամը 20-ին Քյոլնի ֆիլհարմոնիայում WDR սիմֆոնիկ նվագախումբն իր «Հայրենիքի ծեսերը» շարքում առաջին անգամ կատարեց Տիգրան Մանսուրյանի «Ubi est Abel frater tuus?» (Ո՞ւր է քո եղբայր



Աբելը) թավջութակի եւ նվագախմբի համար գրված կոնցերտը, որ ստեղծվել էր արեւմտագերմանական ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի պատվերով եւ հնչեց մեքսիկացի կոմպոզիտոր Սիլվեստրե Ռեվուելթասի 1939-ին հեղինակած «La noche de los Mayas» նվագախմբի համար գրված սյուիտի, ինչպես նաեւ Իգոր Ստրավինսկու 1911-1913-ին հեղինակած «Le Sacre du printemps» («Օրհնյալ գարուն») երկու մասից բաղկացած ռուսական պատկերներ ներկայացնող ստեղծագործության կողքին՝ Մուզիկ տրիենալե համերգային ծրագրում:

Դիրիժորական վահանակի առջեւ դիրիժոր Սեմեոն Բիչկովն էր, մենակատարը՝ հայտնի թավջութակահար Յան Ֆոգլերը:

«Նրանց հայրենիքները մեզ համար էկզոտիկ են: Ռուս Իգոր Ստրավինսկին, հայ Տիգրան Մանսուրյանը, մեքսիկացի Սիլվեստրե Ռեվուելթասը համընդհանուր՝ երաժշտական լեզվով են ինքնարտահայտվում, այդուհանդերձ նրանց արտահայտչաձեւերը նույնը չեն՝ նկատելի տարբերակված են հայրենական դաջվածքով: Հայրենիք եւ օտարություն, մերձավոր եւ հեռավոր, ծայրամաս եւ կենտրոն, այսպիսի հեռանկարային խնդիրների շուրջ են ծավալվում երեք ստեղծագործողների երաժշտական խորհրդածությունները», ծանուցում էր համերգային ազդագիրը:

Համերգը վերնագրված էր «Հայրենիքի ծեսերը», բայց նաեւ՝ Heimat- heimatlos «Հայրենիք եւ հայրենազուրկ»: 2010-ի ապրիլի 24-ին կայացած Տիգրան Մանսուրյանի հետ մեր ծավալուն հարցազրույցի մի մասն ենք միայն ժամանակին հանձնել ընթերցողի ուշադրությանը, մյուս հատվածները թողնելով պատեհ առիթների: Այդ առիթն այսօր մասամբ ներկայանում է՝ 1971 թվականի ապրիլի 6-ին 88 տարեկանում Նյու Յորքում մահկանացուն կնքեց 20-րդ դարի մեծագույն երաժիշտներից մեկը՝ Իգոր Ֆյոդորովիչ Ստրավինսկին, ում, կտակի համաձայն, հուղարկավորեցին Վենետիկում, Սան Միշել գերեզմանոցի՝ այսպես կոչված «ռուսական» տարածքում: Անշուշտ, մահվան 40-ամյակի առիթով կարելի էր առավել ծավալուն անդրադառնալ Ստրավինսկուն, բայց նկատի ունենալով, որ դրա հնարավորությունը կգտնենք հաջորդ տարի՝ նրա ծննդյան 130-ամյակի առիթով, այս անգամ մեր ընթերցողներին ենք ներկայացնում հիշյալ համերգի առիթով Տիգրան Մանսուրյանի հետ մեր զրույցի այն հատվածը, որ առնչվում է Ստրավինսկուն:

**- Մաեստրո՛, ծրագրում երեք տարբեր անուններ են՝ մեքսիկացի Սիլվեստրե Ռեվուելթաս, Տիգրան Մանսուրյան եւ Իգոր Ստրավինսկի: Ի՞նչն է ընդհանուր:**

- Առաջին հեղինակը գրում է Մեքսիկայում ապրած մի հնագույն ժողովրդի՝ մայաների ծեսերը՝ նրանց հարսանեկան ռիթմերը, ուրախությունները: Շատ գեղեցիկ գործ է, սա վերհուշ է մի հայրենիքի, որ մարդիկ կորցրել են: Հեղինակը գեղարվեստական իրականություն է դարձնում մի ռեալ իրականություն, որ կորուսյալ է: Ստրավինսկին 1912-ին գրեց «Le Sacre du printemps» բալետը, դա ներկայացրեց Փարիզում եւ դրանից հետո չվերադարձավ Ռուսաստան, դեգերեց աշխարհով մեկ՝ Շվեյցարիա, Ֆրանսիա, ԱՄՆ-ում երկար ապրեց, Իտալիան շատ սիրեց, հիմա էլ այնտեղ թաղված է: Կարճ ասած, նա իսկական օտարական էր ամենուրեք: Եվ այս՝ իր օտար լինելը այսօրվա համերգի բովանդակության մաս է կազմում: 20-րդ դարում այսպիսի նշանակության եզակի օրինակներ կան, Պրոկոֆեւի, Շոստակովիչի անունների կողքին Ստրավինսկին իրոք չափազանց մեծ երեւույթ է:

**- Ծրագրի բովանդակության մաս է կազմում նաեւ կենտրոնը եւ ծայրամասը:**

- Էս էլ կա ըստ երեւույթին: Թեեւ պետք է ասեմ, որ Ստրավինսկու այս բալետի առնչությամբ Փարիզում պարզվեց, թե ռուս երաժշտությունն այլեւս պերիֆերիա չէ, մայրաքաղաք է ինքը: Ստրավինսկին ուր էլ որ ապրի, էնտեղ կդառնա երաժշտության մայրաքաղաք: Իր ամբողջ կյանքում այդպես եղավ համենայնդեպս:

**- Նույնը չի՞ կարելի ասել նաեւ Մանսուրյանի պարագայում:**

- Ախ, Աստված իմ: Միտքս շարունակեմ՝ Ստրավինսկուն հնարավոր չէ մայրաքաղաքի եւ պերիֆերիայի տեսակետից էդպես բաժանումների տանել: Ինքն էր որոշում՝ որն է մայրաքաղաք եւ որն է պերիֆերիա: Ինքը եղավ այդ մեծ հայրենազուրկը: Կյանքի վերջին տարիներին անվերջ պահանջ ուներ ռուսերեն լեզուն լսելու: Իր այգեպանը ռուս էր եւ նույն բանը ուներ Սալվադոր Դալիի կինը՝ Գալան: Նա էլ ռուսերենի լսողության պահանջ ուներ: Տարիք է գալիս, երբ զգում ես, որ օտար ես, քո լեզուն, քո հիմքերը այնպիսի պահանջով են վերադառնում քեզ: Թվում է, թե աշխարհի քաղաքացի դարձավ, ամեն տեղ եղավ, բայց ահավասիկ օտարական էր: Երբ Ստրավինսկին մահացավ, BBC-ն ասաց՝ մահացավ աշխարհի համար 1 կոմպոզիտորը: Ամեն օր էդ՝ աշխարհում լինելու իր իրավունքը, իր անունը արյուն-քրտինքով է հաստատել:

Գրել է երաժշտություն՝ ռուսերեն՝ փառավոր, ֆրանսերեն՝ փառավոր, անգլերեն, լատիներեն, եբրայերեն, ընդ որում՝ ոչ թե թարգմանել է, հետո է գրել, ուղղակի այդ լեզուներով է գրել: Այս աստիճանի միջազգային է:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Քյոլն, Գերմանիա

# Հոբելյանական ցուցահանդեսներ՝ Գեղարվեստի ակադեմիայի 65-ամյակին

Երեւանի Գեղարվեստի պետական ակադեմիան նշում է հիմնադրման 65-ամյակը: Հիմնադրումից սկսած բուհը փորձության տեւական շրջան է անցել, ընդլայնվել, ավանդույթներ ձեւավորել: Հայաստանի առաջին միակ արվեստի բուհը արվեստագետների բազմաթիվ սերունդներ է կրթել, որոնց մեջ հայ մշակույթի անվանի շատ անձեր:


ՖՈՏՈԼՈՒՐ

65-ամյակին նվիրված ալբոմի ներածականում ԳԱԱ թղթակից-անդամ, ակադեմիայի բազմամյա պրոֆեսոր, արվեստի տեսության եւ պատմության ամբիոնի վարիչ **Վիգեն Ղազարյանը** համառոտ ներկայացնում է բուհի կրթական ու մշակութային նշանակությունը, խոսում հայ մշակույթի ուրույն ձեռագրի, ոճի մասին, որի ձեւավորման համար կարեւորում բազմազանության մեջ միասնության գաղափարը, ինչը հատկապես ակադեմիական կրթության մեջ իրականում հնարավոր է, եթե «ուսուցիչն իր սեփական տաղանդի զսպաշապիկը չպարտադրի իր սաներին, եթե որսա սաների ներքին ձգտումը»: Ուսուցչի նման կերպար նա տեսնում է Էդվարդ Իսաբեկյանի մեջ: Ակադեմիայի առաջին ռեկտոր **Արա Սարգսյանը** որպես նշանաբան ընտրել էր «նախ վարպետություն, ապա ստեղծագործական ազատություն»-ը, եւ որքան էլ դժվար էր խորհրդային տարիներին ընթանալ այս ճանապարհով, այն հնարավորինս իրագործվել է եւ շարունակվում է հիմա էլ, երբ գեղարվեստական ազատությունը շատ հաճախ վերածվում է հակագեղագիտական կամայականությունների:

Գեղարվեստի ակադեմիայի 65-ամյա հոբելյանը նշվեց 3 ցուցահանդեսներով՝ Ալբեր եւ Թովէ Բոյաջեան պատկերասրահում բացված տարաբնույթ եւ հետաքրքրական (լուսանկար, երգիծանկար, գեղանկար, գրաֆիկա) ցուցահանդեսով եւ Նկարիչների միության երկու՝ I հարկի ընդարձակ սրահում բուհի դասախոսների եւ 3-րդ հարկում ուսանողների՝ հիմնականում մեկական աշխատանքների ցուցադրություններով:

Նման ցուցադրությունները, սովորաբար, թեմատիկ, կոմպոզիցիոն եւ կամ այլ, որոշակի չափանիշներ չեն ունենում, ուստի եւ նման մեկնաբանման դժվար է ենթարկել: Մասնակից, հատկապես անվանի արվեստագետներն արդեն իսկ հանրությանը հայտնի են անհատական ցուցահանդեսներով, իրենց ստեղծագործական առանձնահատկությամբ եւ նկարագրով: Եվ ինչպես ռեկտոր **Արամ Իսաբեկյանն** է ասում, նպատակը հանդիպման՝ հաճելի, գեղարվեստական մթնոլորտ ստեղծելն էր, ինչն էլ իրականացավ: Դասախոսներն ու ուսանողները երեկ նույն՝ ազատ ստեղծագործողի կարգավիճակում էին, իսկ 3-րդ հարկի սրահում երիտասարդները ավելի նախաձեռնող էին, երաժշտություն կար, դաշնամուրային կատարում, երգեցողություն: (Ավելի ուշ նախատեսվում է ընտրանի ցուցադրություն՝ ակադեմիայի տարբեր տարիների լավագույն շրջանավարտների եւ դասախոսների լավագույն գործերի ընդգրկմամբ, նաեւ ալբոմի հրատարակում):

Ցուցահանդեսի բացման խոսքը Արամ Իսաբեկյանինն էր: ՀՀ վարչապետի բարեմաղթանք-շնորհավորանքը փոխանցեց Գիտության եւ կրթության նախարար **Արմեն Աշոտյանը**: Ըստ նրա, «ազգային հոգու բաբախուն զարկերակ-կրթական բարձրագույն հաստատությունները» կան եւ շարունակվելու են պետության ուշադրության կենտրոնում լինել՝ էլ ավելի հոգածությամբ: Նախարարը ակնկալեց նաեւ իր դիմանկարի որեւէ վարպետ վրձնի կատարում:

Որքան էլ ցուցադրության ընդհանուր բնույթին, այդուամենայնիվ, նրանց մեջ էլ գունային ու պատկերային մթնոլորտ ստեղծած գործերը առանձնանում էին: Տպավորիչ էին քանդակագործներ Գարեգին Դավթյանի նրբակերտ մանրաքանդակները, Գետիկ Բաղդասարյանի բազմիմաստ գործերը, Անատոլի Գրիգորյանի վառ, հյութեղ գունային ծովափնյա պատկերները, Արամ Իսաբեկյանի Աշտարակի իր տան մերձ-բնաստեղծական բնանկարը, բավական ինքնատիպ էին Վիգեն Ղազարյանի սյուժետիկ (ջրհեղեղային) գործերը՝ գունային պայծառ լուսավորումներով, երբեմն ոչ սովորական երփնահամադրումներով, Աշոտ Հարությունյանի ամպրոպից հետո ծառի ու երկնքի «փոխըմբռնումները», Ավետիք Ավետիքյանի կանաչը եւ այլն:

Երեկոյան, ազգային պատկերասրահի որմնանկարների դահլիճում տեղի ունեցած հյուրասիրության հաճելի մթնոլորտում եղան նաեւ պարգեւատրումներ:

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ

# «Armenian Times» ամսաթերթը համագործակցում է սփյուռքի նախարարության հետ

**Երեկ ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացավ «Armenian Times» ամսաթերթի հետ նախարարության համագործակցության շնորհանդեսը: Ներկաները նախ հնարավորություն ունեցան դիտելու «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի շրջանակներում կայացած «Լրատվամիջոցների V համահայկական համաժողովի» մասին պատմող տեսաֆիլմը, իսկ հետո լսեցին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ողջույնի խոսքը: Նախարարը շնորհավորեց Հայաստանում ամսաթերթի լույսընծայումը: 1994 թ. հայրենիքից դուրս ստեղծված ամսաթերթը, ըստ նախարարի, իր գործունեությամբ կարեւոր դեր է խաղում հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման, այդ կարեւոր կամուրջը էլ ավելի ամրացնելու գործում: «Մեր նախարարությունը կապեր է հաստատում սփյուռքում գործող լրատվամիջոցների հետ եւ դրա վառ ապացույցն է այս ամսաթերթի հետ համագործակցությունը, որի արդյունքում շատ ակտիվ ձեւով լուսաբանվում է մեր նախարարության գործունեությունը», նշեց Հրանուշ Հակոբյանը:**

**«Արդեն ամսաթերթը տպագրվում է հայրենիքում», նշեց հասարակական-քաղաքական պարբերականի գլխավոր խմբագիր Արթուր Խանումյանը: Մոսկվայում հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներով լույս ընծայվող ամսաթերթը ամսվա վերջին հնարավոր կլինի կարդալ նաեւ ինտերնետով: Իսկ շուտով այն կտպագրվի նաեւ ֆրանսերեն: Պարբերականում տեղ են գտնում հայրենիք-սփյուռք գործակցությունը, հայկական համայնքների կյանքը եւ սփյուռքի նախարարության գործունեությունը լուսաբանող նյութեր եւ հոդվածներ: «Մոսկվայում սկիզբ առած եւ Հայաստան վերադարձած ամսաթերթը բազմաթիվ ծրագրեր է պլանավորել սփյուռքի նախարարության հետ եւ դրանք աստիճանաբար կիրականանան», ասաց պրն Խանումյանը ու ավելացրեց, որ նախատեսում են առաջիկայում մամուլի էջերում տպագրել երիտասարդ գրողների ստեղծագործությունները, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների լավագույն հոդվածները:**




**«Ազգի» հարցին պատասխանելով, պրն Խանումյանն ասաց, որ ամսաթերթի խորագրերն աստիճանաբար ընդլայնվում են, Հրանուշ Հակոբյանի խորհրդով արդեն գործում է «Հայոց լեզուն հազարագանձ» ուսուցողական շարքը, լրացնելով մեր երկրի մասին քաղաքական, հասարակական, մշակութային եւ այլ խորագրերը:**

**Ամսաթերթը Մոսկվայում հրատարակվում է, ըստ խմբագրի, 50.000 տպաքանակով, իսկ հայկական դաշտում՝ 1000 օրինակ, եւ դրա մեծ մասը անվճար տրվում է ցանկացողներին, առաքվում նաեւ սփյուռքի կառույցներ: Այժմ պատրաստման փուլում է «Հայապատում» շարքը եւ մշակութային կյանքում ոչ հայտնի անձանց նվիրված էջերը:**

**Պարբերականի լույսընծայումը Հայաստանում ողջունեցին ու շնորհավորեցին ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Նաղաշ Մարտիրոսյանը ու կարեւորեցին նոր ամսաթերթի տեղափոխումը մայր հայրենիք, որը կամուրջ է հայրենիք-սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործում:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Վիճարկեցին Երեւանի չեմպիոնի տիտղոսը



Տեւական ընդմիջումից հետո Շենգավիթի թիվ 1 համալիր մարզադպրոցի դահլիճում կրկին անցկացվեց հանդբոլի Երեւանի պատանեկան առաջնությունը: 7 օր տղաների 7, աղջիկների 5 թիմեր համառ պայքար մղեցին առաջնության մրցանակների համար:

Պատանիների մրցապայքարում չեմպիոնի տիտղոսը վճռորոշ մրցախաղում վիճարկեցին Աջափնյակ համայնքի եւ հանդբոլի մասնագիտացված մարզադպրոցի թիմերը: Ավելի ուժեղ գտնվեց Աջափնյակի թիմը, որը հաղթելով 30-16 հաշվով, դարձավ Երեւանի պատանիների չեմպիոն: Մրցանակային 3-րդ տեղը գրավեց խաղային մարզաձեւերի մանկապատանեկան օլիմպիական մարզադպրոցի թիմը:

Աղջիկների մրցապայքարում հաջողությունն ուղեկցեց հանդբոլի մասնագիտացված մարզադպրոցի հանդբոլիստուհիներին, որոնք էլ ուժեղագույնը ճանաչվեցին: 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրին Շենգավիթի եւ խաղային մարզաձեւերի մանկապատանեկան օլիմպիական մարզադպրոցների թիմերը:

Ընդհանուր առմամբ մրցաշարը լավ էր կազմակերպվել: Դրանում իրենց գործուն աջակցությունն էին դրսեւորել Երեւանի հանդբոլի ֆեդերացիան եւ քաղաքապետարանի սպորտի վարչությունը: Մրցանակակիրները պարգեւատրվեցին մեդալներով ու դիպլոմներով: Հանդբոլի հանրապետական ֆեդերացիան էլ ապահովել էր խաղերի սպասարկումը որակյալ մրցավարներով, նաեւ մրցանակներ էր սահմանել: Պարգեւատրման արարողությանը ներկա էր հանդբոլի հանրապետական ֆեդերացիայի նախագահ Սարգիս Գրիգորյանը: Առաջին երեք տեղերը զբաղեցրած թիմերի լավագույն խաղացողներին հանդբոլի գնդակներ հանձնվեցին: Իսկ 1-2-րդ տեղերը գրաված թիմերը 2-ական գնդակ ստացան:

Երեւանի պատանեկան առաջնության մրցանակակիրները ապրիլի վերջին Վանաձորում կմասնակցեն Հայաստանի առաջնության փնջային մրցումներին:

# Գավաթի եզրափակիչի ճանապարհին



Ֆուտբոլի Հայաստանի գավաթի խաղարկությունն աստիճանաբար մոտենում է վերջնագծին: Պատվավոր մրցանակի հոբելյանական՝ 20-րդ խաղարկության մեկնարկի դուրս եկած բարձրագույն խմբի 8 թիմերից այսօր պայքարը շարունակում են 4-ը: Նրանցից երկուսը՝ «Միկան» եւ «Բանանցը» գավաթի մրցաշարերում արդեն հասել են նշանակալի հաջողության: «Միկան» հնգակի գավաթակիր է, իսկ «Բանանցը» 2 անգամ է վայելել գավաթը նվաճելու բերկրանքը: Ընդ որում հետաքրքրական է, որ վերջին 5 տարիներին «Միկան» եւ «Բանանցը» մշտապես հանդիպում են գավաթի կիսաեզրափակիչ փուլում: Նախորդ 4 խաղարկություններում «Բանանցը» մշտապես փակել է «Միկայի» ճանապարհը դեպի եզրափակիչ: Թե ինչպիսի ելք կունենա թիմերի այս տարվա մրցավեճը, հայտնի կդառնա ապրիլի 20-ին կայանալիք կիսաեզրափակիչ պատասխան հանդիպումից հետո: Իսկ առաջին խաղում գրանցվել է մարտական ոչ-ոքի՝ 3-3:

Այսօր Իջեւանում կկայանա կիսաեզրափակիչ մյուս զույգի՝ «Շիրակի» եւ «Ուլիսի» առաջին հանդիպումը: Ի տարբերություն «Բանանցի» եւ «Միկայի», այսօրվա հանդիպման մասնակիցները դեռեւս չեն ճաշակել գավաթը նվաճելու բերկրանքը: Ճիշտ է, «Շիրակը» 3 անգամ հանդես է եկել գավաթի եզրափակիչում, սակայն մշտապես խաղադաշտը թողել է պարտված: Վճռորոշ խաղում շիրակցիները 1993-ին եւ 1994-ին զիջել են «Արարատին», իսկ 1999-ին՝ «Ցեմենտին»:

Եթե «Շիրակը» գավաթի նախորդ բոլոր խաղարկությունների անփոփոխ մասնակից է, ապա ընդամենը 5 տարվա կենսագրություն ունեցող «Ուլիսը» պատվավոր մրցանակը վիճարկում է 2007-ից: Ուլիսցիները 3-րդ տարին անընդմեջ մտել են կիսաեզրափակիչ: Առայժմ «Ուլիսին» չի հաջողվել հաղթահարել կիսաեզրափակիչի արգելքը: Երկու անգամ էլ թիմի առջեւ եզրափակիչի ճանապարհը փակել են փյունիկցիները՝ հաղթելով բոլոր հանդիպումներում էլ (2009՝ 3-1, 1-0, 2010՝ 2-0, 1-0):

Այսօրվա հանդիպումն «Ուլիսի» համար կլինի գավաթային 19-րդ խաղը: Ուլիսցիները տոնել են 9 հաղթանակ, 1 խաղ ավարտել են ոչ-ոքի, 8-ում պարտվել են, խփել են 22 գնդակ, բաց թողել 18 գոլ: Գավաթի մրցաշարերում «Ուլիսի» լավագույն ռմբարկուն Արթուր Քոչարյանն է, որը խփել է 4 գոլ: Իսկ թիմի ներկայիս կազմից Արտյոմ Ադամյանը ֆուտբոլային իր կարիերայում 15 գոլ է խփել գավաթի մրցաշարերում:

«Շիրակը» 10-րդ անգամ է կիսաեզրափակիչ փուլ մտնում: 1992-1996-ին գյումրեցիները մշտապես մտել են կիսաեզրափակիչ: Վերջին անգամ այդ փուլում «Շիրակը» հանդես է եկել 2004-ին, սակայն չի կարողացել հաղթահարել «Բանանցի» արգելքը: Առաջին խաղում գյումրեցիները հաղթել էին 2-0 հաշվով, սակայն պատասխան խաղում «Բանանցը» ռեւանշի էր հասել՝ 3 անպատասխան գնդակ խփելով մրցակցի դարպասը:

Գավաթի ընթացիկ խաղարկությունում «Շիրակը» պայքարից դուրս է մղել «Փյունիկին» (1-1, 1-0): Իսկ «Ուլիսը» երկու խաղերում էլ միեւնույն 1-0 հաշվով պարտության է մատնել «Արարատին»:

# Ֆրոչը պատրաստ է վճարել մենամարտը Նոթինգհեմում անցկացնելու համար

Երկրորդ միջինքաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Կառլ Ֆրոչը պատրաստ է իր հոնորարի մի մասը զիջել, միայն թե Super Six մրցաշարի կիսաեզրափակիչ հանդիպումը Գլեն Ջոնսոնի հետ կայանա իր հարազատ Նոթինգհեմ քաղաքում: Այս հարցի շուրջ Ֆրոչը բանակցում է մրցաշարի կազմակերպիչ Showtime հեռուստաալիքի ղեկավարության հետ: Վերջինս փոխհատուցում է պահանջում: Ֆրոչը տոմսերի վաճառքից իրեն հասանելիք գումարից 250 հազար դոլարը համաձայն է տալ հեռուստաալիքին, միայն թե մենամարտը կայանա Նոթինգհեմում:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Ֆրոչ-Ջոնսոն կիսաեզրափակիչ մենամարտը նշանակված է հունիսի 4-ին Ատլանտիկ Սիթիում: Սակայն բացառված չէ, որ Ֆրոչի առաջարկն ընդունվի, եւ մենամարտը կայանա Նոթինգհեմում:

«Վերջին երկու մենամարտերն անցկացրել եմ դրսում եւ դա արդարացի չէ իմ երկրպագուների հանդեպ, որոնք ցանկանում են ներկա գտնվել մրցամարտերիս: Կարող եմ ասել, որ Նոթինգհեմցի մարզասերներն ամենաաղմկոտներն ու կրքոտներն են իմ տեսած երկրպագուներից: Դրա համար էլ ես մեծ ջանքեր եմ թափում, որպեսզի մենամարտը կայանա Նոթինգհեմում», նշել է Կառլ Ֆրոչը:

# Ռոնալդոն հրաժեշտ կտա նաեւ հավաքականին

**Աշխարհի կրկնակի չեմպիոն Ռոնալդոն, որն արդեն ավարտել է ելույթները, հունիսի 7-ին Սան Պաուլու քաղաքում հրաժեշտի խաղ կանցկացնի Բրազիլիայի հավաքականում: Այդ օրն աշխարհի հնգակի չեմպիոնները կմրցեն Ռումինիայի հավաքականի հետ: Ռոնալդոն խոստացել է լրջորեն նախապատրաստվել հրաժեշտի հանդիպմանը ու լավ մարզավիճակով խաղադաշտ դուրս գալ: Նա ցանկանում է այդ օրն իր վերջին գոլը խփել ազգային հավաքականում:**

# «Ֆերարին» աճուրդի կհանվի

**Բրիտանացի ավտոարշավորդ Ջենսոն Բատոնին պատկանող «Ֆերարի» 512 BB Berlinetta Boxer մակնիշի մեքենան ապրիլին աճուրդի կհանվի Լոնդոնում: Մասնագետների գնահատմամբ «Ֆորմուլա-1» դասի աշխարհի առաջնությանը մասնակցած մեքենան հիանալի վիճակում է: Ընդհանուր առմամբ մեքենան նման վիճակի հասցնելու համար ծախսվել է 94 հազար ֆունտ ստեռլինգ:**

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Չեմպիոն դառնալու Խորեն Գեւորի 4-րդ փորձը



**Ապրիլի 9-ին Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքում Խորեն Գեւորը երկրորդ միջինքաշային կարգի WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը կվիճարկի չեմպիոնական գոտու տեր Ռոբերտ Շտիգլիցի հետ մենամարտում: Դա կլինի աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու 31-ամյա հայ բռնցքամարտիկի 4-րդ փորձը: Նախորդ 3 փորձերը Խորեն Գեւորի համար անհաջող են ավարտվել:**

**Նշենք, որ ի սկզբանե Շտիգլիցն ապրիլի 9-ին իր տիտղոսի պաշտպանության համար պետք է մենամարտեր WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Դմիտրի Սարտիսոնի հետ: Սակայն մի քանի օր առաջ վերջինս վնասվածք է ստացել, ուստի չի կարող ռինգ դուրս գալ:**

**Խորեն Գեւորն էլ ապրիլի 16-ին պետք է մենամարտեր միջին քաշում Եվրոպայի չեմպիոն Մեթյու Մակլինի հետ: Բնականաբար, այդ մենամարտն այլեւս չի կայանա:**

**Մարտի 16-ին 31-ամյակը նշած Խորեն Գեւորը ծնվել է Էջմիածնում: Ներկայումս մարզվում եւ բնակվում է Գերմանիայի Համբուրգ քաղաքում: 174 սմ հասակ ունեցող հայ բռնցքամարտիկը պրոֆեսիոնալ ռինգում 36 մենամարտ է անցկացրել, որից 31-ում հաղթել է (16-ը՝ ժամկետից շուտ), 5-ում պարտվել է:**

**Ռոբերտ Շտիգլիցը ծնվել է Ռուսաստանի Եյսկ քաղաքում: Հունիսին նա կնշի իր 30-ամյակը: Ներկայումս բնակվում է Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքում: Նա ավելի բարձրահասակ է (180 սմ): Պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 41 մենամարտերից 39-ում հաղթել է (23-ը՝ ժամկետից շուտ), կրել է 2 պարտություն:**

# Վուվուզելաները կարգելվեն նաեւ հոկեյում

Սլովակիայում կայանալիք տափօղակով հոկեյի աշխարհի առաջնության կազմակերպիչներն արգելելու են վուվուզելաներով մուտքը մարզադահլիճ: Աֆրիկյան այդ նվագարանը դարձել էր անցյալ տարի Հարավաֆրիկյան Հանրապետությունում կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնության խորհրդանիշը: Սակայն արդեն առաջնության ընթացքում շատերն իրենց դժգոհությունն էին արտահայտել վուվուզելաների աղմուկից: Օրինակ, Պորտուգալիայի հավաքականի կիսապաշտպան Քրիշտիանու Ռոնալդուն դժգոհել էր, որ վուվուզելաները խանգարում են ֆուտբոլիստներին խաղի ժամանակ կենտրոնանալ:

Անցած տարվա հունիսին Մեծ Բրիտանիայի քաղաքներից առաջինը Կարդիֆում արգելվեց ֆուտբոլային խաղերի ժամանակ քաղաքի 3 գլխավոր մարզադաշտերում վուվուզելաների օգտագործումը: 2010-ի օգոստոսին Ֆրանսիայի ֆուտբոլի պրոֆեսիոնալ լիգան արգելեց երկրի առաջնության հանդիպումներում վուվուզելաների օգտագործումը: Իսկ արդեն աշնանը նման արգելք դրեց նաեւ ՈՒԵՖԱ-ն իր հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումներում: Հետագայում նման որոշում կայացրեց նաեւ բասկետբոլի միջազգային ֆեդերացիան Թուրքիայում կայացած աշխարհի առաջնության ժամանակ: Եվ ահա այժմ այդ արգելքը տարածվելու է նաեւ հոկեյի հանդիպումների վրա:

# Բլատերն ու բեն Համամը ՖԻՖԱ-ի նախագահի պաշտոնի թեկնածուներն են

**Հունիսի 1-ին կայանալիք ՖԻՖԱ-ի նախագահի ընտրություններում պաշտոնապես իրենց թեկնածությունն են առաջադրել ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի ներկայիս ղեկավար Յոզեֆ Բլատերն ու Ասիայի կոնֆեդերացիայի նախագահ, քաթարցի Մոհամեդ բեն Համամը: 61-ամյա Մոհամեդ բեն Համամը, որ 2002-ից գլխավորում է ֆուտբոլի Ասիայի կոնֆեդերացիան, արդեն սկսել է նախընտրական իր ակտիվ գործունեությունը՝ քննադատելով ՖԻՖԱ-ի ներկայիս ղեկավարությանը:**

**«ՖԻՖԱ-ն խրվել է բյուրոկրատիայի մեջ: Եթե ընտրվեմ, ապա մի քանի հեղափոխական փոփոխություններ կկատարեմ: Մասնավորապես ՖԻՖԱ-ի գործկոմի կազմում կավելացնեմ կոնֆեդերացիաների ներկայացուցիչների թիվը, դարպասի գրավման փաստն արձանագրելու համար կթույլատրեմ օգտվել կրկնապատկերներից», նշել է Մոհամեդ բեն Համամը:**

**Բեն Համամի նախընտրական արշավի գլխավոր հաղթաթուղթն ընտրվելու դեպքում ՖԻՖԱ-ի գործունեությունը թափանցիկ դարձնելու խոստումն է: Իսկ ահա 75-ամյա շվեյցարացի Յոզեֆ Բլատերը նման խոստում չի տալիս, գտնելով, որ իր ղեկավարած կազմակերպության գործունեությունն առանց այն էլ շատ թափանցիկ է: Բեն Համամը նաեւ խոստանում է երկու անգամ ավելացնել ՖԻՖԱ-ի անդամ 208 ազգային ֆեդերացիաներին տարեկան հատկացվող գումարի չափը՝ հասցնելով 500 հազար դոլարի: Ըստ որոշ լրատվամիջոցների, Բեն Համամին արդեն իր աջակցությունն է հայտնել Անգլիայի ֆուտբոլի ֆեդերացիան, որը դժգոհ էր մնացել Յոզեֆ Բլատերից 218-ի աշխարհի առաջնության մրցավայրի ընտրության հարցում:**

**Սակայն ամեն դեպքում աշխարհի ամենաազդեցիկ մարզական ղեկավարներից մեկին՝ Յոզեֆ Բլատերին հաղթելն այնքան էլ հեշտ չէ: 75-ամյա Բլատերը ՖԻՖԱ-ի նախագահի պաշտոնում ընտրվել է 1998-ին՝ փոխարինելով բրազիլացի Ժոաո Ավելանժին: Ընդհանուր առմամբ նա իրեն վատ չի դրսեւորել ՖԻՖԱ-ի նախագահի պաշտոնում: Նրա օգտին է խոսում նաեւ այն, որ վերջին 4 տարում ՖԻՖԱ-ի ընդհանուր եկամուտը կազմել է 4,189 մլրդ դոլար, իսկ ծախսերը՝ 3,558 մլրդ դոլար: Այսինքն ՖԻՖԱ-ն 631 մլն դոլարի շահույթ է ստացել:**

**Բլատերը նախագահական աթոռի համար մղվող պայքարի մեծ փորձ ունի: Օրինակ, 1998-ին նա բավական թեժ պայքարում կարողացավ հաղթել իր գլխավոր հակառակորդին՝ ՈՒԵՖԱ-ի այն ժամանակվա նախագահ Լեննարտ Յուհանսոնին: Իսկ 2002-ին, երբ ՖԻՖԱ-ն ֆինանսական լուրջ խնդիրներ ուներ, կրկին վերընտրվեց իր պաշտոնում՝ հաղթելով Աֆրիկայի ֆուտբոլի կոնֆեդերացիայի նախագահ Իսա Խայատուին:**

**Առաջիկա նախագահական ընտրությունների մասին իր տեսակետն է հայտնել Ռուսաստանի ֆուտբոլային միության պատվավոր նախագահ Վյաչեսլավ Կոլոսկովը. «Մոհամեդ բեն Համամը չի կարող Յոզեֆ Բլատերին լուրջ հակառակորդ լինել: Երկուսին էլ լավ եմ ճանաչում, նրանց հարաբերություններում որոշակի հիմնախնդիրներ կան: Եթե ընդհանուր առմամբ դիտենք ստեղծված իրավիճակը, ապա նախագահի պաշտոնում Բլատերը մրցակից չունի»:**

**Առայժմ Բլատերը հանրությանը չի ծանոթացրել իր նախընտրական ծրագրին: Հայտնի է միայն, որ վերընտրվելու դեպքում նա 2015-ին ինքնակամ հեռանալու է ՖԻՖԱ-ից:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Տարեկան 1 մլն թռչուն է սատկում պլաստիկե տոպրակների պատճառով



Աշխարհում միջին հաշվարկով տարեկան արտադրվում է 4-5 տրիլիոն պլաստիկե տոպրակ: Առօրյայում խիստ անհրաժեշտ պարագա համարվող պլաստիկե տոպրակների կյանքի տեւողությունն այնքան էլ երկար չէ. առավելագույնը 20 րոպե: Սակայն տոպրակի քայքայման համար պահանջվում է 100-200 տարի:

Տարեկան համաշխարհային օվկիանոս է լցվում 6 մլն 300.000 տոննա աղբ. դրանց զգալի մասը պլաստիկե տոպրակներ ու շշեր են: Հաճախ կենդանիները, դրանք համարելով սնունդ, ուտում են: Պլաստիկե տոպրակների պատճառով տարեկան 1 մլն թռչուն, 100.000 ծովային կաթնասուն եւ հազարավոր ձկնատեսակներ են սատկում:

Թեպետ Հայաստանին դեռեւս չի սպառնում համաշխարհային օվկիանոսի սարսափելի պատկերը, սակայն խնդիրն արդիական է նաեւ մեզ մոտ: Երկրի բոլոր գետերն ու Սեւանա լիճը աղտոտված են: Չեն պահպանվում աղբանոցների համար կիրառվող միջազգային ստանդարտները: Համաձայն ընդունված նորմերի՝ աղբանոցը պետք է լինի ոչ ջրաթափանց վայրում, աղբի շերտի վրա պետք է լցնել շինարարական ավազ եւ կանաչապատել: Հայաստանում նման «էլիտար» կարգի աղբանոց անհնար է գտնել. հայկական աղբանոցները բաց են: Անձրեւը, որ լուծում է քիմիական նյութերը, հոսում, ռոդման ջուր է դառնում կամ էլ ներծծվում ու միանում խմելու ջրի պաշարներին. եւ բազմաթիվ հիվանդություններ, թունավորված մթերքներ:

Քաղաքից դուրս ամեն մի բնակավայրում կհանդիպեք տեսարանի, երբ աղբը թափում են մոտակա ձորում կամ գետակում: Այդպիսի պատկեր է Բջնիում, Գառնիում, Քաղսիում: Բնապահպան **Գրետա Գաբրիելյանի** մեկնաբանությամբ՝ առավել վտանգավոր են հատկապես թեթեւ պլաստիկե տոպրակները, որոնք թեթեւ քաշի պատճառով դժվար է հավաքել ու հանձնել վերամշակման. դրանք մնում են բնության մեջ:

Բազմաթիվ երկրներ, գիտակցելով պլաստիկե շշերի ու տոպրակների հասցրած վնասը, փորձում են այլընտրանքային միջոցներ կիրառել: Ֆրանսիայում, Բանգլադեշում, Տանզանիայում, Մոզամբիկում արգելում են դրանց արտադրությունն ու ներմուծումը: Չինաստանում դատական գործ կհարուցվի բոլոր այն խանութների տնօրենների դեմ, ովքեր մթերք վաճառելիս գնորդին կտրամադրեն ոչ թե թղթե կամ կտորե, այլ պլաստիկե տոպրակ: Եվրոպական բազմաթիվ երկրներում, որպես այլընտրանք, օգտագործում են կտորից ու թղթից տոպրակները, որոնք պիտանի են բազմակի օգտագործման համար: Այլընտրանքային վերոնշյալ տարբերակն է առաջարկում նաեւ բնապահպան **Թամարա Գալստյանը**: Սակայն սա կարող է հանգեցնել բնապահպանական մեկ այլ աղետի. թղթե տոպրակների կիրառման պարագայում երկրի սակավաթիվ անտառները կարող են իսպառ վերանալ:

Մինչ որեւէ քայլ ձեռնարկելը, բնապահպանի մեկնաբանությամբ, անհրաժեշտ է փոխել մարդկանց գիտակցությունը. Գալստյանն առաջարկում է դպրոցականների համար ոչ հաճելի, բայց շատ օգտակար էքսկուրսիա կազմակերպել ու նրանց տանել աղբանոց: «Եթե երեխան գիտակցի, թե իր նետած աղբը կուտակվելով հետագայում ինչպիսի խնդիրներ է առաջացնում, ապա ավելի զգույշ կլինի եւ խնամքով կվերաբերվի բնությանը»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Ռեժիմը խուճապի մեջ է»

1-ին էջից

Քանի որ ընտրազանգվածը շատ ամորֆ բան է՝ այսօր քո հետ է, վաղը՝ Կարապետիչի, մյուս օրը՝ Սեֆիլյանի, հաջորդ օրը Րաֆֆու՝ ումից ավելի մեծ հույսեր ունենա: Բա որ խուճապի մեջ չլիներ՝ արմատական ընդդիմության ողջ ծանր հրետանին օրեր շարունակ իներցիայով հացադուլ անողին կխփեր ու խփե՞ր՝ մեկը չեղավ՝ խփելու տրանսից նրան դուրս բերի: Կամ թերթերը լծված կլինեի՞ն դիմակա ուժին ու գործչին վարկաբեկելուն՝ հասարակ մարդու հոգսով զբաղվելու փոխարեն: Բնակչության մեկ երրորդ մասի աղքատության պաշտոնական ցուցանիշ ունեցող երկրում կեղծ խոստում տվողի բերանը պետք է կոտրել, անկախ նրանից խոստում տվողը իշխանությունից է, թե՞ ընդդիմությունից, որովհետեւ սա սահմանային տվյալ է, դրանից մի քիչ էլ անցնի՝ սովն է: Բայց ընդդիմությունը շարունակում է մեծ-մեծ խոստումները՝ հերթական խաբվելուն պատրաստ զանգվածներին հանրահավաքային իրականություն փոխադրելու համար ու սեփական մարդկանց իշխանության բերելու համար: Ու այդպես էլ ամեն օր բոլորիս ոտքերը «թուլանում» են կարդալով՝ ռեժիմը խուճապի մեջ է, ապրիլի 8-ի հանրահավաքից առաջ իշխանությունների գործողությունները հիստերիկ դրսեւորումներ են ստանում, Ազատության հրապարակում ժողովուրդն է որոշելու (հա՞): Դե, հոխորտալն ավելի հեշտ ու հասկանալի է մեր հասարակության չպատրաստված շերտերի համար, արտահերթ ընտրությունների եւ «Սերժիկ, հեռացիր» կարգախոսներն ավելի պրիմիտիվ կեր են, քան թե մեր արմատականները ստիպված լինեին խոստովանել, թե հերթական ընտրությունների՛ համար են զանգված տաքացնում, կամ այդ զանգվածին հաշիվ տային, թե ինչպիսի՞ ցուցակով են ընտրությունների գնալու, քանի՞ տոկոս ձայնի են հավակնելու, քանի՞ անուն կկարողանան իրենց կուսակցախումբ միությունից ցուցակում ընդգրկել՝ խորհրդարան տանելու եւ հատկապես ո՞ւմ, ՀԱԿ-ում հավաքված կուսակցություններից գոնե մեկական մարդ լինելո՞ւ է այդ ցուցակում: Որանք որ խոսվեն՝ բոլորը կտեսնեն, որ տակը բան չկա, շատերի հավակնությունները չբավարարված կմնան, որովհետեւ պատռիտրաքի՝ ՀԱԿ-ը չի կարողանա մի քսան անունի հաստատ խոսք տալ, եթե մինչեւ այժմ հավաքված ընտրազանգվածը գնա ընտրությունների ու հենց ՀԱԿ-ի ցուցակն ընտրի (իսկ որ հավաքվածների մեջ ընդհանրապես դժգոհներն են, բայց ոչ միայն ՀԱԿ-ի համակիրները, սա փաստ է):

Տեր-Պետրոսյանի շատ կողմնակիցներ հասկանում են այս բոլորն ու մանրից լքում են նրան՝ անուններ չտանք, գործընթացից տեղյակները գիտեն այդ անունները: Էլ չասած, որ կգա պահը նաեւ բացատրելու, թե ի՞նչ է նշանակում ընդհանրապես կոնգրես, հայ իրականության հետ ի՞նչ կապ ունի, ո՞ւմ կոնգրեսն է՝ հայերի՞, թե ամերիկացիների. կոնգրեսն էլ, սենատն էլ Ամերիկայինն են, մերն Ազգային ժողովն է:

Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.webstand.am կայքում

www. azg.am

## ՈՒՂՂՈՒՄ

«Ազգ» օրաթերթի ապրիլի 2-ի թիվ 58(4677) «Մասնավորեցում» ներդիրում տպագրված 1-ին էջի 2-րդ հայտարարության վերնագրում

**«Համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 18-ի թիվ 250-Ն որոշման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինության օտարման ենթակա տրանսպորտային միջոցը»** փոխարեն կարդալ՝

**«Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 24-ի թիվ 156-Ն որոշման «ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինության «Հրազդան -5» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի լուծարումից հետո մնացած օտարման ենթակա գույքը»**

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն***

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### «Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ավտոպահեստամասեր ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար հրապարակային մրցույթի կազմակերպման մասին

«Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ «Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ավտոպահեստամասեր (ՈՒԱԶ, ֆոլկսվագեն, ՎԱԶ, ՌԱՖ, Ֆորդ-Տրանզիտ ավտոմեքենաների տարբեր մակնիշների համար) ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ՝ Մասնակից), որոնք ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել «Հայինկասացիա» ՓԲԸ ք.Երեւան, Դ.Անհաղթի 3 հասցեում:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ **2011թ. մայիսի 6-ին, ժամը 17:00**:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամը՝ **2011թ. մայիսի 10-ին, ժամը 14:00**՝ «Հայինկասացիա» ՓԲԸ , ք.Երեւան, Դ.Անհաղթի 3 հասցեում:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է **2011թ. մայիսի 13-ին, ժամը 14:00**՝«Հայինկասացիա» ՓԲԸ , ք.Երեւան, Դ.Անհաղթի 3 հասցեում:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը հրապարակված է www.cba.am ինտերնետային կայքում: Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «Հայինկասացիա» ՓԲԸ , գործերի կառավարչություն հեռ. 28-15-00, 20-14-26, 28-51-03:

Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում իրականացվում է ԱրմենՏել ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ ԱՀԿ-ների (АТС) ու ԳՄԿ (ЛКС) եւ դրանց բաղկացուցիչ մասերի, ավտոմեքենաների, սարքավորումների, միկրոսխեմաների, ռելեների, դիոդների, պլատաների, տրանզիստորների, դիմադրությունների, կանգնակների եւ ապրանքանյութական այլ բազմանուն արժեքների աճուրդային վաճառք:

Աճուրդները իրականացվում են յուրաքանչյուր աշխ. օր ժ.11.00 – 17.00, ք. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդներին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228 կամ այցելել www.borsa.am

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է «Վադա Բեկ» ՍՊԸ-ի կողմից, ՀՀ Կոտայքի մարզի Բջնի համայնքի վարչական տարածքում՝ «Վարդապետի աղբյուր» բնական աղբյուրից, արդյունաբերական (շշալցում) նպատակով 0,41 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ., ապրիլի 12-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

***ՀՀ բնապահպանության նախարարություն***

*Ձեւ N 1*

### Հաշվապահական հաշվեկշիռ առ 01.01.2011 թ.

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը | «Արշակ եւ Լուսինե» ՍՊԸ |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Շխ-կազմակերպում; լից. Շխ-203 |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | 28204000497 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | 00814094 |
| Չափի միավորը | հազ. |
| Գտնվելու վայրը | ք. Երեւան, Մյասնիկյան պող. 4շ., բն. 11 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | Արարատի մարզ, Արգավանդ գ., Ծովակալ Իսակովի փող., թիվ 4 խանութի առաջին հարկի մի մաս |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 3196 | 2526 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 1250 | 1250 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 4446 | 3776 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեին | 170 | 128 | 190 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 6726 | 14125 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 6854 | 14315 |
| Հաշվեկշիռ | 230 | 11300 | 18091 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | 8157 | 17166 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 8207 | 17216 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | 179 | 0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 179 | 0 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 2394 | 875 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 80 | 0 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 440 | 0 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 2914 | 875 |
| Հաշվեկշիռ | 500 | 11300 | 18091 |

*Ձեւ N 2*

### Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն առ 01.01.2011 թ.

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 41318 | 53451 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (28189) | (36980) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 13129 | 16471 |
| Վարչական ծախսեր | 050 | (4871) | (6962) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 8258 | 9509 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | | (500) |
| | 081 | | (500) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 8258 | 9009 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 8258 | 9009 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 8258 | 9009 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 8258 | 9009 |

***Ղեկավար՝*** ***Պ. ՄԻՆԱՍՅԱՆ***

***Գլխավոր հաշվապահ՝*** ***Ա. ՍԻՄՈՆՅԱՆ***

**«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ**

**Աուդիտորական ծառայությունների իրականացման՝ Լիցենզիա ԱԾ N 085**

Տնօրեն/աուդիտոր Հ. ԴԱՆԻԵԼՅԱՆ (աուդիտորական որակավորման վկայական թիվ 068)

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 5.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: